# ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2018-2019ԹԹ.

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996:  Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի ղեկավար և ուսումնասիրության իրականացնող՝
Արմենուհի Բուռնազյան

Ծրագրի օգնական և ուսումնասիրող՝
Աստղիկ Ավչյան

**Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ**

www.policyobserver.am

www.facebook.com/PolicyObserver/

# Բովանդակություն


Գնումների համակարգում օրենսդրական զարգացումների մոնիտորինգ 2019թ............3

Գնումների համակարգի միտումների ամփոփ վերլուծություն ......................................11

Ընդհանուր միտումները .....................................................................................11

Գնումների բաշխումն ըստ պատվիրատուների.........................................................18

Հաղթող մասնակիցների ուսումնասիրություն..........................................................22

Կնքված պայմանագրերի ծավալը և կառուցվածքը /ոչ մրցակցային գնումները/.......24

Բողոքարկման համակարգի մոնիտորինգ ...............................................................37

2018-2019 թթ. գնումների ոլորտային ուսումնասիրություն .........................................52

Մեթոդաբանությունը և մոնիտորինգի ժամանակահատվածը ..................................52

Պաշտպանության նախարարություն ........................................................................53

Պաշտպանության բնագավառի բյուջետային ծախսերի ուսումնասիրություն...........53

Պաշտպանության նախարարության գնումները........................................................54

Ոստիկանություն .........................................................................................................65

Երևանի քաղաքապետարան ........................................................................................76

Գնումների ոլորտում բացահայտված խնդիրները և դրանց հնարավոր լուծման վերաբերյալ առաջարկությունները...........................................................................85

ՀԱՎԵԼՎԱԾ 1 ................................................................................................................91

Այլընտրանքի առկայության պարագայում 15 մլն դրամի սահմանաչափը գերազանցող ոչ մրցակցային գնումների նկարագիրը, 2019թ. .........................................................91

ՀԱՎԵԼՎԱԾ 2..................................................................................................................103

ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից 2018-2019թթ. պետգնումների մոնիտորինգի արդյունքներով ձևավորված ռիսկային ընկերությունների ցանկ ........................................................103

## Գնումների համակարգում օրենսդրական զարգացումների մոնիտորինգ 2019թ.

Դիտարկվող ժամանակահատվածում նախաձեռնվել է պետական գնումների օրենսդրության վերանայման գործընթաց, ինչի արդյունքում իրականացվել են օրենսդրական մի շարք բարեփոխումներ: Մասնավորապես, 2019թ. գարնանը փոփոխություններ են կատարվել ՀՀ Կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ[1], որոնց հիմնական նպատակն է եղել գնման գործընթացների արդյունավետության բարձրացումը, ընթացակարգերին մասնակցելու գրավչության աստիճանի բարձրացումը (այդ թվում փոքր և սկսնակ բիզնեսի համար), ինչպես նաև հայտերի գնահատման փուլում մասնակիցներին ձևական պահանջներով չծանրաբեռնումը:

Հարկ է նշել, որ իրականացվելիք բարեփոխումների շրջանակում Ֆինանսների նախարարության (ՖՆ) կողմից ծավալվել են բազմաթիվ քննարկումներ տարբեր շահագրգիռ կողմերի հետ և ի թիվս այլոց, փոփոխությունների մի մասը կատարվել է ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:

Առանձնացնելով առավել կարևոր փոփոխությունները՝ այս կարգավորումների արդյունքում՝

- ✓ Ժամկետանց հարկային պարտավորություն ունեցող տնտեսավարող սուբյեկտներին ընձեռվել է գործընթացից դուրս չմնալու  հնարավորություն՝ վճարելով պարտքերը:
- ✓ Փոփոխություն է կատարվել մասնակցության շեմի առումով. նախկինում մինչև 5 մլն դրամ գնումների դեպքում տնտեսվարողին հնարավորություն էր տրվում առանց որակավորման չափանիշների մասնակցել պետական գնումներին: Այժմ այդ շեմը բարձրացվել է մինչև 10 մլն դրամ: Բացառություն են կազմում մասնագիտական վերապատրաստման, աուդիտորական կամ խորհրդատվական ծառայությունների, շինարարական ծրագրերի՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումները, ինչպես նաև ՀՀ գործող ստանդարտներով կամ նորմատիվ-տեխնիկական պահանջներով սահմանված դեպքերը, որոնց պարագայում այս շեմը չի գործելու:
- ✓ Կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Այս կարգավորումը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում:
- ✓ Փոփոխություններ են կատարվել 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ցանկում, այսինքն հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով մեկ անձից կատարվող գնումների ցանկում՝

[1] ՀՀ Կառավարության 2019թ. մայիսի 2-ի N516-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130644

- 7-րդ կետը վերաշարադրվել է նոր խմբագրությամբ. անշարժ գույքի վարձակալությունը կարող է ձեռք բերվել մեկ անձից գնման եղանակով, պայմանով, որ կարիքը հնարավոր չէ բավարարել պետական կամ համայնքային սեփականություն համարվող տարածքների անհատույց օգտագործման միջոցով
- ուժը կորցրած են ճանաչվել 13-րդ, 16-րդ, 28-րդ և 29-րդ կետերը (13. բանկային սպասարկման ծառայություններ, 16. ՀՀ շքանշանների, մեդալների և դրանց տուփերի պատրաստում, 28. ծխելու դեմ պայքարի ռազմավարությանը և այդ ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացմանն ուղղված ծառայություններ և 29. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի առողջապահության համակարգերի քարտեզագրման ծառայություններ)
- ցանկը լրացվել է նոր՝ 31-րդ և 32-րդ կետերով (31. Առողջապահության նախարարության անունով մարդասիրական օգնության կարգով տրամադրված բեռների ստացման, մաքսազերծման և բաշխման ծառայություններ և 32. Ավիացիոն համակարգի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայություններ)

✓ 23-րդ կետի 5-րդ ենթակետը լրացվել է նոր «ե» պարբերությամբ, որի համաձայն գնումները կարող են կատարվել մեկ անձից շինարարական ծրագրերի իրականացման ընթացքում տեխնիկական կամ հեղինակային հսկողության ծառայություններ մատուցող անձի կողմից պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում, պայմանով, որ ծառայության մատուցումը պետք է սկսվի այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

✓ Այսուհետ կանխավճարի չափը չի կարող գերազանցել ընտրված մասնակցի առաջարկած գնի 25 տոկոսը՝ բացառությամբ պետական գաղտնիք պարունակող՝ ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման դեպքերի:

✓ Մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը այլ կերպ է գնահատվելու ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում. նախկինում կատարված պայմանագրերը գնահատվելու են նմանատիպ, եթե դրանց շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 50, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ 70 տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի 20, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ 35 տոկոսից:

Փոփոխությունները ուժի մեջ են մտել 2019թ. հունիսի 1-ից:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ բարեփոխումները հիմնականում կարելի է դրական գնահատել: Մասնավորապես, այս փոփոխություններից առնվազն երկուսի դեպքում դրական ազդեցությունը նկատելի է եղել[2]:

Նախ, առանց որակավորման չափանիշների առումով պետգնումներին մասնակցելու շեմի բարձրացումը 5 մլն-ից 10 մլն դրամի միտված են եղել գնման ընթացակարգերին մասնակցության և հատկապես ՓՄՁ ոլորտի համար պետգնումներին մասնակցելու գրավչության աստիճանի բարձրացմանը: Ինչպես վկայում են 2018թ. և 2019թ. հունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանում հայտարարված ընթացակարգերի ուսումնասիրությունները, այս փոփոխությունները չնայած ոչ զգալի, սակայն մի փոքր դրական ազդեցություն են թողել մասնակցության ցուցանիշի վրա: Մասնավորապես, վերոնշյալ ժամանակահատվածում մրցակցային ընթացակարգերում[3] միջին մասնակցության ցուցանիշը 2,8-ից դարձել է 2,9-ը:

Մյուս բարեփոխումը կայացել է նրանում, որ մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց շտկելու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների մասով առկա անհամապատասխանությունները և այդ պատճառով դուրս չմնալու գնումների գործընթացից: Համաձայն ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից իրականացված պետգնումների բողոքարկման համակարգի մոնիտորինգի արդյունքների՝ մինչև վերոնշյալ փոփոխությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակում) ներառելու պատճառներից շուրջ 40%-ը կապված է եղել օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հետ: Ավելին, եղել են դեպքեր, երբ բողոքը քննող անձինք այս մասով ընդունել են իրարամերժ որոշումներ: Այս բարեփոխումը դրական ազդեցություն ունեցավ բողոքարկման գործընթացների վրա, ինչը արտահայտվեց հարկային պարտավորություններ ունենալու պատճառով մասնակիցներին գնումների սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվող ընթացակարգերի քանակի կտրուկ կրճատմամբ[4] (տե՛ս Բողոքարկման համակարգի մոնիտորինգ բաժինը):

Ի լրումն վերոնշյալ փոփոխությունների, տարվա վերջին եռամսյակում նախաձեռնվեցին փոփոխություններ[5], որոնք միտված էին գնման գործընթացների արդյունավետության բարձրացմանը և դրանց կազմակերպման ժամկետների հնարավորինս կրճատմանը, պատվիրատուների բնականոն գործունեության անընդհատության ապահովմանը, պայմանագրերի կատարման շրջանակում առաջացող հնարավոր ռիսկերի նվազեցմանը և պատվիրատուների և գնահատող հանձնաժողովների կողմից հնարավոր սուբյեկտիվ որոշումների կայացման բացառմանը: Այս փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորվում էր այն հանգամանքներով, որ առկա կարգավորումները բավարար չափով չէին ապահովում գնման գործընթացների արդյունավետությունը, պայմանագրերի կատարման շրջանակում մասնակիցները հնարավորություն էին ստանում ցուցաբերելու ոչ պատշաճ վարքագիծ՝ վտանգելով ծրագրերի լիարժեք իրականացումը:

---

[2] Այս առաջարկները ներկայացվել են ՖՆ ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից՝ հիմնվելով իրականացված ուսումնասիրությունների վրա:
[3] Բաց մրցույթ, հրատապ բաց մրցույթ, գնանշման հարցում և էլեկտրոնային աճուրդ:
[4] Մասնավորապես, 2019թ. 4-րդ եռամսյակում արդեն քննվել է օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորությունների (դրոշմանիշային վճարի) վերաբերյալ ընդամենը մեկ դեպք:
[5] ՀՀ Կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի N 1422-Ն որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=135267

Այնուամենայնիվ, այս հիմնավորումների ներքո նախաձեռնված որոշ փոփոխություններ բավականին կտրուկ էին և խնդրահարույց:

Մասնավորապես, համաձայն նոր փոփոխությունների, մասնակիցները հայտով պետք է ներկայացնեն իրենց կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին, ընդ որում, եթե գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- ✓ չի գերազանցում գնումների բազային միավորի[6] տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով,
- ✓ գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով:

Ի դեպ, պահպանվեցին նաև նախկին կարգավորմամբ գործող ապահովումների տեսակները, մասնավորապես, հայտի և պայմանագրի ապահովումները: Այսպիսով, բացի որակավորման ապահովումից, հրավերով նախատեսված դեպքերում մասնակիցները պետք է ներկայացնեն գնային առաջարկի 5%-ի չափով հայտի ապահովում և պայմանագրի գնի 10%-ի չափով պայմանագրի ապահովում, ընդ որում՝

- ✓ եթե գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով,
- ✓ եթե գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարծում ենք, որ որակավորման ապահովման կիրառման այս բավական խիստ պահանջը, ի լրումն օրենքով պահանջված վերոնշյալ ապահովումների տրամադրմանը, անհարկի խոչընդոտ է հանդիսանում  գնումների գործընթացում հատկապես ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների մասնակցության համար (ինչը և բազմիցս բարձրաձայնվել է այս ոլորտի ներկայացուցիչների կողմից) և ընդհանուր առմամբ բացասաբար կարող են ազդել ազատ մրցակցության և արդյունավետ գնագոյացման ապահովման վրա: Բացի այդ, այսպիսի պահանջների կիրառումը կարող է հանգեցնել համակարգի մենաշնորհացմանը և միջնորդավորված գնումների առաջացմանը:

Մյուս խնդրահարույց փոփոխություններից պետք է նշել հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով մեկ անձից կատարվող գնումների ցանկը (սույն կարգի 23-րդ կետը) նոր ենթակետերով համալրելը: Մասնավորապես, այս ցանկը լրացվել է 7 նոր ենթակետերով (33-39-րդ), որոնց համաձայն հետևյալ գնումները կարող են կատարվել Գնումների մասին օրենքի (ԳՄՕ) 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի[7] հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով՝

---

[6] Գնումների բազային միավորը 1մլն ՀՀ դրամն է:

[7] ԳՄՕ 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:

- մշակութային և/կամ գեղարվեստաստեղծագործական միջոցառումների (բեմադրությունների, ցուցադրությունների, ցուցահանդեսների, համերգների, փառատոնների, կինոարտադրության, հեռուստահաղորդումների արտադրության) կազմակերպման շրջանակում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, բացառությամբ շինարարական աշխատանքների,
- մշակութային արժեքների ձեռքբերում,
- պարտատոմսերի թողարկման, վերաբացման և հետգնման ծառայություններ,
- պետական կամ համայնքային հիմնարկից տեղական ինքնակառավարման մարմնի կարիքների համար ծառայությունների ձեռքբերում,
- բանկային սպասարկման ծառայություններ,
- պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից ապրանքի, աշխատանքի և ծառայության ձեռքբերում, եթե տվյալ կազմակերպության ստեղծման նպատակը՝ կանոնադրությամբ նախատեսված հիմնական գործունեության առարկան, հիմնադրին՝ գնման առարկա հանդիսացող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումն է,
- պետության և համայնքի հիսուն տոկոսից ավել մասնակցությամբ առևտրային կազմակերպությունից այնպիսի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, որոնք չեն կարող իրականացվել այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից:

Վերոնշյալ կետերի հետ կապված կարծում ենք բավական ռիսկային էր մշակութային և գեղարվեստաստեղծագործական միջոցառումների կազմակերպման շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն այս ցանկում ընդգրկելը, հատկապես հաշվի առնելով վերջին շրջանում այդ առումով ոչ մրցակցային եղանակների հաճախակի կիրառման պրակտիկան: Բացի այդ, վերոնշյալ վերջին երկու ենթակետերով սահմանված հիմքերը որոշակի կոռուպցիոն ռիսկեր են պարունակում, քանի որ հնարավորություն են տալիս ստեղծել պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և դրանց կանոնադրությամբ նախատեսված հիմնական գործունեության առարկան սահմանել գնման առարկա հանդիսացող ապրանքի մատակարարումը, ծառայության մատուցումը կամ աշխատանքի կատարումը, իսկ այնուհետև կիրառել մեկ անձից գնման եղանակը՝ շրջանցելով մրցակցային գնման ընթացակարգերը: Որոշակի ռիսկեր է պարունակում նաև այն հանգամանքը, թե ինչպես է հիմնավորվելու այն փաստը, որ բացի պետության և համայնքի հիսուն տոկոսից ավել մասնակցությամբ առևտրային կազմակերպություններից տվյալ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը այլ տնտեսվարող սուբյեկտներից հնարավոր չէ իրականացնել:

Այլ փոփոխությունների շարքում կարելի է նշել մասնավորապես հետևյալ կետերը.

- ✓ ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար կատարվող գնումների դեպքում գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը հաստատվում է գնման պահանջի ծագման օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող գնումների դեպքում, ՀՀ Կառավարության կողմից միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատվելուց հետո ձեռնարկվում են միջոցներ մինչև բյուջետային տարին սկսվելը ԳՄՕ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-

րդ կետի[8] հիման վրա գնման գործընթացները կազմակերպելու և պայմանագրերը կնքելու ուղղությամբ: Եթե շինարարական ծրագրի գնման համար պահանջվող ամբողջական միջոցները նախատեսված են հաստատված միջնաժամկետ ծախսային ծրագրում, ապա գնման գործընթացը կազմակերպվում է օրենքի սույն ենթակետում նշված կարգավորման համաձայն՝ նախագծային փաստաթղթերով նախատեսված ամբողջական արժեքով:

- ✓ Գնումները կարող են կատարվել ԳՄՕ 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի[9] հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար գնումների դեպքում համապատասխանաբար ՀՀ Կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ անհետաձգելի համարված այլ դեպքերում:
- ✓ Ծրագրային ապահովման, ներառյալ եթե այդ նպատակով կնքվելիք պայմանագրի գնի հիսուն տոկոսից ավելը վերաբերում է ապարատային ապահովումներին, ինչպես նաև շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների (ծառայությունների) գնումը համարվում է խորհրդատվական ծառայություն, և դրանց ձեռքբերումն իրականացվում է ԳՄՕ 44-րդ հոդվածով սահմանված կարգով: Ընդ որում այս ենթակետի կիրառման դեպքում կարող է չկիրառվել նախաորակավորման ընթացակարգ:
- ✓ Շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման գործընթացն իրականացնում է պատվիրատուն:
- ✓ Գնման ընթացակարգը որպես ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում որակելու համար հաշվի է առնվում կնքվելիք պայմանագրի գնի մեջ դրանցից որևէ մեկի մեծ տեսակարար կշիռ ունենալու հանգամանքը, բացառությամբ շինարարական աշխատանքների:
- ✓ Որակավորման ապահովումը չի վերադարձվում այն ներկայացրած անձին, եթե վերջինս խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:
- ✓ Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝
    - o *շեղում* է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի 5 %ը գերազանցող լրացուցիչ ծավալի

[8] ԳՄՕ 15-րդ հոդվածի 6-րդ մաս՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝ 1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը:
2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:
[9] Արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով:

աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի 25 %,

- *կորուստ* են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի 50 %:

- ✓ Շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրով նախատեսվում են կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները, և սահմանվում է, որ եթե այդ ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:
- ✓ Շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում անձը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով:
- ✓ Եթե գնումն իրականացվում է ԳՄՕ 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի[10] կամ այս կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության հիման վրա[11], ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում, ընտրված մասնակիցը որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովում ներկայացնում է, եթե գնումը կատարվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:
- ✓ Եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը ապա մասնակիցը հայտի, որակավորման և պայմանագրի ապահովումներ չի ներկայացնում և ներկայացնում է միայն գնային առաջարկ:

Փոփոխությունները ուժի մեջ են մտել 2019թ. նոյեմբերի 2-ից:

Ամփոփելով վերոնշյալը, հարկ է նշել, որ եթե 2019թ. առաջին կիսամյակում ընդունված փոփոխությունները միտված էին գնումների գործընթացի ազատականացմանը, ապա տարվա վերջին եռամսյակում ընդունված փոփոխություններով կատարվեց կտրուկ շրջադարձ դեպի պայմանների խստացում, ինչը կարող է որոշակի խնդիրներ առաջացնել և մասնավորապես, խոչընդոտ

[10] Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ 3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից (դրա գինը պետք է չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10%-ը):

[11] Գնումները կարող են կատարվել ԳՄՕ 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա, եթե կատարվում են ռազմական դրություն հայտարարելու պայմաններում՝ այլընտրանքային ապրանքներով, աշխատանքներով և ծառայություններով փոխարինելու անհնարինության կամ ապրանքների դեպքում՝ պահուստներում բացակայության հետևանքով առաջացած և հրատապ համարվող կարիքների բավարարման նպատակով:

հանդիսանալ պետգնումներում ՓՄՁ-ների մասնակցության համար, հանգեցնել համակարգի մենաշնորհացմանը և միջնորդավորված գնումների առաջացմանը, ինչը իր հերթին բացասական ազդեցություն կունենա ազատ մրցակցության և արդյունավետ գնագոյացման ապահովման վրա:

Ի լրումն վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների, 2019թ. վերջին Կառավարության կողմից հաստատվեց Պետական ֆինանսների կառավարման համակարգի (ՊՖԿՀ) 2019-2023 թթ. բարեփոխումների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը[12], որում պետգնումների համակարգի բարեփոխումների համատեքստում անդրադարձ կատարվեց 3 հիմնական բաղադրիչի՝ էլեկտրոնային գնումների համակարգի արդիականացմանը, գնումների պլանավորման համակարգի և գնումների բողոքարկման համակարգի կատարելագործմանը:

Էլեկտրոնային գնումների համակարգի արդիականացման բաղադրիչի ներքո ակնկալվում է էլեկտրոնային գնումների համակարգի նոր ծրագրային ապահովման մշակում և ներդրում, որի ֆինանսավորումը պետք է իրականացվի ՀՀ պետական բյուջեի կամ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների հաշվին: Ակնկալվում է նաև համակարգն օգտագործող շահառուների համար վերապատրաստման ծրագրերի կազմակերպում: Միջոցառումների իրականացման վերջնաժամկետը սահմանված է 2020թ. դեկտեմբեր ամիսը:

Գնումների պլանավորման բաղադրիչի ներքո ակնկալվում է մշակել ավտոմատ եղանակով, միանման բնութագրեր ունեցող առարկաների նախահաշվային գների որոշման և պլանավորման միասնական համակարգի ներդրման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Միջոցառման իրականացման վերջնաժամկետը, ինչպես նախորդ բաղադրիչի դեպքում, սահմանված է 2020թ. դեկտեմբեր ամիսը:

Իսկ գնումների բողոքարկման համակարգի կատարելագործման բաղադրիչի ներքո ակնկալվում է ԳՄՕ-ում փոփոխությունների կատարում, որոնց նպատակն է գործունակ և անկախ բողոքարկման համակարգի ստեղծումը: Այս բաղադրիչի ներքո մտադրված է մինչև սահմանել դրույթներ, որոնցով գնումների հետ կապված բողոքները կքննվեն դատարանների կողմից՝ նման դեպքերի համար սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ: Միջոցառման իրականացման վերջնաժամկետը սահմանված է 2021թ. դեկտեմբեր ամիսը:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ ՊՖԿՀ 2019-2023 թթ. բարեփոխումների ռազմավարությունը անդրադարձել է գնումների համակարգի գլխավոր հիմնախնդիրներին և մշակվել է իրատեսական գործողությունների ծրագիր, որով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացումը կարող է նպաստել գնումների համակարգում թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը:

Ամփոփելով, նշենք, որ ՀՔՀԱԿ ՀԿ կողմից վերհանված օրենսդրական խնդիրները և դրանց լուծման առաջարկությունները ներկայացվել են պատկան կառույցներին, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմիններին (տես Գնումների ոլորտում բացահայտված խնդիրները և դրանց հնարավոր լուծման վերաբերյալ առաջարկությունները բաժինը):

---

[12] ՀՔՀԱԿ ՀԿ կողմից ներկայացված առաջարկությունները կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/1923/digest?page=1

# Գնումների համակարգի միտումների ամփոփ վերլուծություն

## Ընդհանուր միտումները

Պաշտոնական տվյալների համաձայն 2019թ. պատվիրատուների կողմից կազմակերպվել են թվով 167518, իսկ 2018թ.՝ 133473 գնման ընթացակարգ[13]: Ընդ որում, եթե 2018թ. չեն կայացել կազմակերպված ընթացակարգերի շուրջ 11%-ը, ապա 2019թ. այս ցուցանիշը աճել է՝ կազմելով 15%, ինչը բավական մտահոգիչ է (Աղյուսակ 1 և 2):

**Աղյուսակ 1. Գնման ընթացակարգերի քանակական բնութագիրը, 2018թ.**

| | Ապրանք | Աշխատանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Կազմակերպված ընթացակարգերի քանակը, որից՝ | 100 086 | 3 545 | 29 842 | **133 473** |
| կայացած ընթացակարգերի քանակը | 85 489 | 3 378 | 29 274 | 118 141 |
| չկայացած ընթացակարգերի թվաքանակը | 14 597 | 167 | 568 | **15 332** |
| *Չկայացած ընթացակարգերի մասնաբաժինը կազմակերպված ընթացակարգերի մեջ, %* | *15%* | *5%* | *2%* | ***11%*** |

**Աղյուսակ 2. Գնման ընթացակարգերի քանակական բնութագիրը, 2019թ.**

| | Ապրանք | Աշխատանք | Ծառայություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Կազմակերպված ընթացակարգերի քանակը, որից | 129 718 | 4 964 | 32 836 | **167 518** |
| կայացած ընթացակարգերի քանակը | 106 121 | 4 442 | 31 925 | 142 488 |
| չկայացած ընթացակարգերի թվաքանակը | 23 597 | 522 | 911 | **25 030** |
| *Չկայացած ընթացակարգերի մասնաբաժինը կազմակերպված ընթացակարգերի մեջ, %* | *18%* | *10%* | *3%* | ***15%*** |

[13] Տվյալները ներկայացված են յուրաքանչյուր չափաբաժինը որպես առանձին ընթացակարգ հաշվարկով: Հաշվարկի մեջ չեն ներառված պետական գաղտնիք պարունակող գնումները:

2019թ. կազմակերպված գնման ընթացակարգերի շուրջ 53 տոկոսը (89215 ընթացակարգ) իրականացվել է գնանշման հարցմամբ, 7 տոկոսը՝ էլեկտրոնային աճուրդի, 2 տոկոսը՝ բաց մրցույթի (այդ թվում հրատապ), իսկ 38 տոկոսը՝ (62923 ընթացակարգ) մեկ անձից գնման ձևով: 2019թ. նկատվում է նախորդ տարվա համեմատ մեկ անձից գնման ընթացակարգի քանակական մասնաբաժնի նվազում (մոտ 5%-ով), սակայն այս ցուցանիշի մեծությունը դեռևս մտահոգիչ է: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ չնայած նկատվում է նախորդ տարվա համեմատ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի կիրառման ավելացում (քանակական մասնաբաժինը ավելացել է մոտ 6%-ով), սակայն բաց մրցույթի մասնաբաժնի առումով նկատվում է մի փոքր նվազում (մոտ 1,5%-ով), ինչպես նաև մտահոգիչ է ամփոփված մրցույթների մեջ չկայացած բաց և հրատապ բաց մրցույթների մասնաբաժնի ավելացումը (շուրջ 15%-ով) (Աղյուսակ 3 և 4):

**Աղյուսակ 3. Ամփոփված ընթացակարգերի քանակական տվյալները ըստ գնման ձևերի, 2018թ.**

| | 2018թ. | | |
|---|---|---|---|
| **Գնման ձևը** | Ամփոփված ընթացակարգեր (մասնաբաժինը ընդհանուր ամփոփված ընթացակարգերի մեջ, %) | Կայացած ընթացակարգեր | Չկայացած ընթացակարգեր (մասնաբաժինը ամփոփված ընթացակարգերի մեջ, %) |
| **Բաց մրցույթ** | 3319 (2.5%) | 3 018 | 301 (9.1%) |
| **Հրատապ բաց մրցույթ** | 327 (0.2%) | 311 | 16 (4.9%) |
| **Գնանշման հարցում** | 71630 (53.7%) | 56 967 | 14 663 (20.5%) |
| **Էլ. աճուրդ** | 1665 (1.2%) | 1 390 | 275 (16.5%) |
| **Մեկ անձ** | 56516 (42.3%) | 56 444 | 72 (0.1%) |

**Աղյուսակ 4. Ամփոփված ընթացակարգերի քանակական տվյալները ըստ գնման ձևերի, 2019թ.**

| | 2019թ. | | |
|---|---|---|---|
| **Գնման ձևը** | Ամփոփված ընթացակարգեր (մասնաբաժինը ընդհանուր ամփոփված ընթացակարգերի մեջ, %) | Կայացած ընթացակարգեր | Չկայացած ընթացակարգեր (մասնաբաժինը ամփոփված ընթացակարգերի մեջ, %) |
| **Բաց մրցույթ** | 1644 (1%) | 1 565 | 79 (4.8%) |

| | | | |
|---|---|---|---|
| **Չրատապ բաց մրցույթ** | 1092 (0.7%) | 680 | 412 (37.7%) |
| **Գնանշման հարցում** | 89215 (53.3%) | 67 978 | 21 237 (23.8%) |
| **Էլ. աճուրդ** | 12580 (7.5%) | 9 435 | 3 145 (25%) |
| **Մեկ անձ** | 62923 (37.6%) | 62 766 | 157 (0.2%) |

Հարկ է նշել, որ պետգնումներում միջին մասնակցության ցուցանիշի մասով կան խնդիրներ, սակայն այս առումով 2019թ. դրական միտում է նկատվել: Մասնավորապես, եթե 2018թ. ընդհանրական միջին մասնակցության ցուցանիշը կազմել է 1.5, ապա 2019թ. այս ցուցանիշը ավելացել է՝ կազմելով 1.8 (Աղյուսակ 5 և 6):

**Աղյուսակ 5. Մասնակցության տվյալները կազմակերպված ընթացակարգերին, 2018թ.**

| Գնման ձևը | Ընթացակարգերի քանակը | Մասնակիցների թվաքանակը | Միջին մասնակցությունը |
|---|---|---|---|
| Բաց մրցույթ | 3 319 | 8 230 | 2.5 |
| Չրատապ բաց մրցույթ | 327 | 941 | 2.9 |
| Երկփուլ մրցույթ | 16 | 11 | 0.7 |
| Գնանշման հարցում | 71 630 | 126 763 | 1.8 |
| Էլեկտրոնային աճուրդ | 1 665 | 3 210 | 1.9 |
| Մեկ անձ | 56 516 | 57 358 | 1.1 |
| Ընդամենը | 133 473 | 196 513 | **1.5** |

**Աղյուսակ 6. Մասնակցության տվյալները կազմակերպված ընթացակարգերին, 2019թ.**

| Գնման ձևը | Ընթացակարգերի քանակը | Մասնակիցների թվաքանակը | Միջին մասնակցությունը |
|---|---|---|---|
| Բաց մրցույթ | 1644 | 4937 | 3 |
| Չրատապ բաց մրցույթ | 1092 | 3178 | 2.9 |
| Երկփուլ մրցույթ | 2 | 2 | 1 |
| Շրջանակային համաձայնագիր | 62 | 62 | 1 |
| Գնանշման հարցում | 89215 | 194522 | 2.2 |
| Էլ. աճուրդ | 12580 | 25461 | 2 |
| Մեկ անձ | 62923 | 64441 | 1 |
| Ընդամենը | 167518 | 292603 | **1.7** |

Պետք է նշել, որ այս ցուցանիշի բարելավումը մասնակիորեն նաև պայմանավորված է 2019թ. առաջին կիսամյակում նախաձեռնված և հունիսի 1-ից ուժի մեջ մտած որոշ օրենսդրական փոփոխությունների հետ, որոնց համաձայն որակավորման չափանիշների առումով պետգնումներին մասնակցելու շեմը բարձրացվեց 5 մլն-ից 10 մլն դրամի, որոնք չնայած ոչ զգալի, սակայն դրական ազդեցություն են ունեցել մասնակցության ցուցանիշի վրա: Այս առումով, մասնավորապես, 2018թ. և 2019թ. հունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանում կազմակերպված ընթացակարգերի ուսումնասիրությունները վկայում են, որ մրցակցային ընթացակարգերում[14] միջին մասնակցության ցուցանիշը ոչ զգալի, սակայն բարելավել է՝ նախորդ ժամանակաշրջանի 2.8-ից դառնալով 2.9-ը:

Աղյուսակ 7-ում և 8-ում ներկայացված են 2018 և 2019թթ. կազմակերպված ընթացակարգերում մերժված մասնակիցների վերաբերյալ տվյալները, որից երևում է, որ ընդհանուր մասնակիցների մեջ մերժվածների մասնաբաժինը 2019թ. կազմել է շուրջ 2.4%, ինչը մի փոքր նվազել է նախորդ տարվա 3.1%-ի համեմատ:

**Աղյուսակ 7. Մերժված մասնակիցների վերաբերյալ տվյալները կազմակերպված ընթացակարգերին, 2018թ.**

| Գնման ձևը | Ընթացակարգերի քանակը | Մասնակիցների թվաքանակը | |
|---|---|---|---|
| | | Ընդամենը | Մերժված |
| Բաց մրցույթ | 3 319 | 8 230 | 469 (5.7%) |
| Հրատապ բաց մրցույթ | 327 | 941 | 43 (4.6%) |
| Երկփուլ մրցույթ | 16 | 11 | 0 |
| Գնանշման հարցում | 71 630 | 126 763 | 5040 (3.9%) |
| Էլեկտրոնային աճուրդ | 1 665 | 3 210 | 531 (16.5%) |
| Մեկ անձ | 56 516 | 57 358 | 26 (0.04%) |
| Ընդամենը | 133 473 | 196 513 | **6109 (3.1%)** |

**Աղյուսակ 8. Մերժված մասնակիցների վերաբերյալ տվյալները կազմակերպված ընթացակարգերին, 2019թ.**

| Գնման ձևը | Ընթացակարգերի քանակը | Մասնակիցների թվաքանակը | |
|---|---|---|---|
| | | Ընդամենը | Մերժված |
| Բաց մրցույթ | 1644 | 4937 | 138 (2.8%) |
| Հրատապ բաց մրցույթ | 1092 | 3178 | 176 (5.5%) |
| Գնանշման հարցում | 89215 | 194522 | 5974 (3%) |
| Էլ. աճուրդ | 12580 | 25461 | 796 (3.1%) |
| Մեկ անձ | 62923 | 64441 | 43 (0.1%) |
| Ընդամենը | 167454 | 292539 | **7127 (2.4%)** |

[14] Բաց մրցույթ, հրատապ բաց մրցույթ, գնանշման հարցում և էլեկտրոնային աճուրդ:

Ինչպես կարելի է նկատել վերոնշյալ աղյուսակներից, ընդհանուր մասնակիցների մեջ մերժվածների առավել խոշոր մասնաբաժինը կազմել է 2018թ. (16.5%) կազմակերպված ընթացակարգերում էլեկտրոնային աճուրդի գնման ձևի դեպքում, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018թ. որոշակի ժամանակահատվածի ընթացքում էլեկտրոնային աճուրդի համակարգում եղել են խնդիրներ, որոնք երբեմն հանգեցրել է մասնակիցներին տեխնիկական պատճառներով մերժմանը:

Այսպիսով, կարելի է ասել, որ պետգնումների համակարգում 2019թ. ընթացքում միջին մասնակցության մասով նկատվել են որոշակի դրական փոփոխություններ: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ տարվա վերջին եռամսյակում նախաձեռնված օրենսդրական փոփոխությունները և մասնավորապես, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության սահմանումը, կարող են բացասական ազդեցություն ունենալ մասնակցության ցուցանիշի վրա, ինչն հավանաբար իր արտացոլումը կգտնի հաջորդ ժամանակաշրջանի ընթացքում:

Համաձայն պաշտոնական տվյալների, 2019թ. պատվիրատուների կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի ընդհանուր նախահաշվային արժեքը կազմել է շուրջ 355 մլրդ դրամ, որից 129,3 մլրդ դրամը ապրանքների, 72,6 մլրդ դրամը աշխատանքների, իսկ 153 մլրդ դրամը ծառայությունների ձեռքբերման համար (Աղյուսակ 9):

**Աղյուսակ 9. Կայացած ընթացակարգերի նախահաշվային արժեքների և կնքված պայմանագրերի գների համեմատական տվյալները, 2018 և 2019թթ.**

| | 2018թ. | 2019թ. |
|---|---|---|
| **Ընդամենը նախահաշվային, մլրդ դրամ, որից՝** | **273.2** | **355** |
| Ապրանքներ | 101.1 | 129.3 |
| Աշխատանքներ | 53.8 | 72.6 |
| Ծառայություններ | 118.3 | 153 |
| **Ընդամենը կնքված պայմանագրերի գներ, մլրդ դրամ, որից՝** | **259.7** | **333.8** |
| Ապրանքներ | 94.1 | 118.1 |
| Աշխատանքներ | 49.3 | 65.3 |
| Ծառայություններ | 116.3 | 150 |

2019թ. կայացած ընթացակարգերի արդյունքում առաջացած տնտեսումը կազմել է շուրջ 21.2 մլն. դրամ, որից 11.2 մլրդ դրամը ապրանքների, 7 մլրդ դրամը աշխատանքների և 3 մլրդ դրամը ծառայությունների գծով:

Կայացած ընթացակարգերի նախահաշվային արժեքների և կնքված պայմանագրերի գների ըստ գնման ձևերի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ 2019թ. առավել մեծ տնտեսումներ եղել են գնանշման հարցման գնման ձևով ապրանքների և աշխատանքների ձեռքբերման դեպքում (Աղյուսակ 10):

**Աղյուսակ 10. Կայացած ընթացակարգերի նախահաշվային արժեքների և կնքված պայմանագրերի գների համեմատական տվյալները ըստ գնման ձևերի, 2019թ.**

| Ընդամենը նախահաշվային, մլրդ դրամ, որից՝ | Ապրանք | Աշխատանք | Ծառայություն | Ընդհանուր |
|---|---|---|---|---|
| Բաց մրցույթ | 15.6 | 17 | 4.5 | **37.1** |
| Հրատապ բաց մրցույթ | 23.4 | 17.4 | 2.5 | **43.3** |
| Շրջանակային համաձայնագիր | 0 | 7.1 | 0.01 | **7.11** |
| Գնանշման հարցում | 38.4 | 15.4 | 9.8 | **63.6** |
| Էլեկտրոնային աճուրդ | 21.3 | 0.02 | 2.6 | **23.92** |
| Մեկ անձ | 30 | 15.8 | 133.6 | **179.4** |
| **Ընդամենը կնքված պայմանագրերի գներ, մլրդ դրամ, որից՝** | | | | |
| Բաց մրցույթ | 13.7 | 14.2 | 3.8 | **31.7** |
| Հրատապ բաց մրցույթ | 21.6 | 16.4 | 2.5 | **40.5** |
| Շրջանակային համաձայնագիր | 0 | 7.1 | 0.01 | **7.11** |
| Գնանշման հարցում | 32.4 | 11.9 | 8.2 | **52.5** |
| Էլեկտրոնային աճուրդ | 19.9 | 0.01 | 2.6 | **22.51** |
| Մեկ անձ | 29.7 | 15.6 | 133.4 | **178.7** |

Համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքում ներկայացված տվյալների՝ 2019թ. կնքվել են 16586 պայմանագրեր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 232.7 մլրդ դրամի պարտավորություն: 2018թ. կնքվել են 14233 պայմանագրեր՝ գեներացնելով շուրջ 180.1 մլրդ դրամի պարտավորություններ (Գծապատկեր 1 և 2): Այսպիսով, 2019թ. նախորդ տարվա համեմատ գրանցվել է կնքված պայմանագրերի քանակի մոտ 16%-ի, իսկ պայմանագրային արժեքի առումով՝ մոտ 29%-ի աճ:

**Գծապատկեր 1. Կնքված պայմանագրերի քանակական բնութագիրը, 2018 և 2019թթ. եռամսյակային կտրվածքով**




**Գծապատկեր 2. Կնքված պայմանագրերի արժեքային բնութագիրը, 2018 և 2019թթ. եռամսյակային կտրվածքով**




Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերներում ներկայացված տվյալներից, կնքված պայմանագրերի քանակի առումով 2019թ.բոլոր եռամսյակներում, բացի 1-ին եռամսյակից, կնքվել են ավելի շատ պայմանագրեր, քան նախորդ տարվա համապատասխան եռամսյակներում: Մինչդեռ, արժեքային առումով պատկերը մի փոքր այլ է.2019թ.բոլոր եռամսյակներում, բացի 2-րդ եռամսյակից, գեներացված պարտավորությունները գերազանցում են նախորդ տարվա համապատասխան եռամսյակների պարտավորություններին:

Հարկ է նշել, որ ARMEPS համակարգում պատվիրատուների հաշվետվողականության առումով կան որոշակի տեխնիկական խնդիրներ, քանի որ մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ ARMEPS կայքում ներկայացված

տվյալները նույն ժամանակաշրջանի համար պարբերաբար փոփոխվում են[15]: Այս անհամապատասխանությունների առաջացման պատճառը կապված է պատվիրատուների կողմից համակարգում տվյալների ամսաթվերի սխալ մուտքագրման հետ[16] և չնայած այն կրում է ավելի շատ տեխնիկական բնույթ, սակայն ներկայացված տվյալների ճշգրտության և հանրային վերահսկողության առումով այն բավական խնդրահարույց է:

Բացի այդ, պայմանագրերի կատարման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության (մասնավորապես հանձնման-ընդունման արձանագրությունների և վճարումը հավաստող փաստաթղթերի) հրապարակումը ARMEPS կայքում ևս թերի կերպով է իրականացվում պատվիրատուների կողմից:

Ընդհանուր առմամբ, պայմանագրերի կատարման շրջանակում մատակարարների պատշաճ վարքագծի դրսևորման հետ մեկտեղ պակաս կարևոր չէ նաև պատվիրատուների կողմից այս մասով հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքների պահպանումը՝ հնարավոր կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար: Հետևաբար, անհրաժեշտ է այս դրույթների պահպանման պահանջը սահմանել պետգնումների օրենսդրությամբ և հաշվի առնել նաև էլեկտրոնային գնումների համակարգի արդիականացման համատեքստում:

## Գնումների բաշխումն ըստ պատվիրատուների

Համաձայն գնումների հաշվետվողականության կայքի միջոցով գեներացվող տվյալների, 2019թ. ընթացքում 16586 պայմանագրերը կնքվել են 201 պատվիրատուների կողմից, իսկ 2018թ. 14233 պայմանագրերը՝ 212 պատվիրատուների կողմից:

Ինչպես նախկին ժամանակաշրջաններում, այնպես էլ 2019թ. հանրային գնումներում նկատվում է պատվիրատուների մեծ կենտրոնացվածություն, սակայն, ի տարբերություն նախորդ տարվա, 2019թ. այս ցուցանիշը մի փոքր նվազել է: Մասնավորապես, եթե 2018թ. խոշորագույն 5 պատվիրատուներին բաժին էր ընկնում ընդհանուր 180.1 մլրդ դրամ պայմանագրերի 80%-ը կամ շուրջ 145.7 մլրդ դրամը, ապա 2019թ. խոշորագույն պատվիրատուների հնգյակին բաժին է ընկնում ընդհանուր 232.7 մլրդ դրամ պայմանագրերի 75%-ը կամ շուրջ 174.5 մլրդ դրամը (Աղյուսակ 1 և 2):

Ի դեպ, արժեքային առումով այսպիսի կենտրոնացվածությանը զուգընթաց, խոշորագույն 5 պատվիրատուների կնքած պայմանագրերի քանակական մասնաբաժինը գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված ընդհանուր պայմանագրերի մեջ այնքան էլ մեծ չէ և երկու ժամանակաշրջանի համար 26-27% (Աղյուսակ 11 և 12):

---

[15] 2019թ. փետրվարին ներբեռնված տվյալներով 2018թ. տարեկան կտրվածքով համակարգում երևում է 14233 կնքված պայմանագիր՝ 180.1 մլրդ դրամի պարտավորությամբ, մարտին այս նույն աղբյուրի տվյալներով 2018թ.  պայմանագրերի թիվը արդեն երևում է 208-ով ավել (14441), իսկ գեներացված պարտավորությունները շուրջ 6 մլրդ-ով ավել (186 մլրդ դրամ), իսկ ահա 2020թ. հունվարի սկզբի դրությամբ պայմանագրերի թիվը կրկին աճել է 144-ով (14585), իսկ գեներացված պարտավորությունները շուրջ 3,5 մլրդ-ով (189,5 մլրդ դրամ):

[16] Պատվիրատուները երբեմն համակարգում տվյալներ մուտքագրելիս նշում են ոչ թե պարտավորության առաջացման ամսաթիվը, այլ պայմանագրի կնքման ամսաթիվը, ինչի հետևանքով տվյալ ժամանակաշրջանի պարտավորության տվյալները ավտոմատ կերպով գումարվում են նախորդ՝ պայմանագրի կնքման ժամանակաշրջանի տվյալներին:

## Աղյուսակ 11. Գնումներում խոշորագույն պատվիրատուները 2018թ.

| | Պատվիրատու | Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ | Մասնաբաժինը ընդհանուրում, % | Կնքված պայմանագրերի քանակը, հատ | Մասնաբաժինը ընդհանուրում, % |
|---|---|---|---|---|---|
| **1** | Առողջապահության նախարարություն | 67 | 37 | 1202 | 8 |
| **2** | Պաշտպանության նախարարություն | 42.5 | 24 | 951 | 7 |
| **3** | Ոստիկանություն | 16.3 | 8 | 785 | 5 |
| **4** | Երևանի քաղաքապետարան | 10.5 | 6 | 899 | 6 |
| **5** | Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն | 9.4 | 5 | 148 | 1 |
| | **Խոշորագույն պատվիրատուների հնգյակ** | **145.7** | **80** | **3985** | **27** |
| | 212 | **180.1** | | **14233** | |

## Աղյուսակ 12. Գնումներում խոշորագույն պատվիրատուները, 2019թ.

| | Պատվիրատու | Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ | Մասնաբաժինը ընդհանուրում, % | Կնքված պայմանագրերի քանակը, հատ | Մասնաբաժինը ընդհանուրում, % |
|---|---|---|---|---|---|
| **1** | Առողջապահության նախարարություն | 90.9 ↑ | 39 | 1740 | 10 |
| **2** | Պաշտպանության նախարարություն | 38.8 ↓ | 16 | 1046 | 6 |
| **3** | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 18.3 ↑ | 8 | 193 | 1 |
| **4** | ՊԵԿ | 13.3 ↑ | 6 | 364 | 2 |
| **5** | Ոստիկանություն | 13.2 ↓ | 6 | 882 | 6 |
| | **Խոշորագույն պատվիրատուների հնգյակ** | **174.5** | **75** | **4225** | **26** |
| | 201 | **232.7** | | **16586** | |

ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել, թե ովքեր են եղել 2019թ. 5 խոշորագույն պատվիրատուների ամենախոշոր մատակարարները (Աղյուսակ 13-17):

**Աղյուսակ 13. Առողջապահության նախարարության խոշորագույն մատակարարները**

| | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|
| 1 | Սբ. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ | 4.4 | Սբ. Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ | 4.4 |
| 2 | Էրեբունի  բժշկական կենտրոն | 3.4 | Էրեբունի  բժշկական կենտրոն | 5.7 |
| 3 | Արաբկիր Բժշկական Համալիր-ԵԴԱԻ ՍՊԸ | 3 | Արաբկիր Բժշկական Համալիր-ԵԴԱԻ ՍՊԸ | 3 |
| 4 | Նատալի Ֆարմ | 2.1 | Նատալի Ֆարմ | 2.8 |
| 5 | Երևանի Մխ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան հիմնադրամ | 2 | Երևանի Մխ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան հիմնադրամ | 2.7 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարներ, մլրդ դրամ** | **14.9** | | **18.6** |
| | Պատվիրատուի ընդհանուր գնումները, մլրդ դրամ | 67 | | 90.9 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարի մասնաբաժինը ընդհանուր գնումներում, %** | **22** | | **20** |

**Աղյուսակ 14. Պաշտպանության նախարարության խոշորագույն մատակարարները**

| | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆլեշ ՍՊԸ | 7.2 | Մաքս Օիլ ՍՊԸ | 5.9 |
| 2 | Ավանգարդ ՍՊԸ | 2.9 | Ֆլեշ ՍՊԸ | 3.9 |
| 3 | Էլիտ Կապիտալ ՍՊԸ | 2.5 | Գազօիլ ՍՊԸ | 2.4 |
| 4 | ՀԷՑ ՓԲԸ | 2.1 | ՀԷՑ ՓԲԸ | 2.1 |
| 5 | Էրիզ ՍՊԸ | 1.8 | Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ ՍՊԸ | 1.6 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարներ, մլրդ դրամ** | **16.5** | | **15.9** |
| | Պատվիրատուի ընդհանուր գնումները, մլրդ դրամ | 42.5 | | 38.8 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարի մասնաբաժինը պատվիրատուի ընդհանուր գնումներում, %** | **39** | | **41** |

**Աղյուսակ 15. Տարածքային կառավարման և զարգացման նախարարության խոշորագույն մատակարարները**

| | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|
| 1 | Լոռի ՃՇՇ ՓԲԸ | 0.2 | Կապավոր ՍՊԸ | 3.9 |
| 2 | ԱԱԲ Պրոեկտ ՍՊԸ | 0.09 | Արարատ-ճանշին ՍՊԸ | 1.7 |
| 3 | ՀԷՑ ՓԲԸ | 0.01 | ԱԱԲ Պրոեկտ ՍՊԸ | 1.6 |
| 4 | Տեր Հայրապետյան ՇԻՆ ՍՊԸ | 0.009 | Մերձմոսկովյան ԲԲԸ | 1.5 |
| 5 | ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ | 0.007 | Խաչիար ՍՊԸ | 1.2 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարներ, մլրդ դրամ** | **0.316** | | **9.9** |
| | Պատվիրատուի ընդհանուր գնումները, մլրդ դրամ | 0.4 | | 16.5 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարի մասնաբաժինը պատվիրատուի ընդհանուր գնումներում, %** | **79** | | **60** |

**Աղյուսակ 16. Պետական եկամուտների կոմիտեի խոշորագույն մատակարարները**

| | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|
| 1 | Էյ Էմ Փի Ջի գրուպ ՍՊԸ | 1.9 | Էյ Էմ Փի Ջի գրուպ ՍՊԸ | 6.4 |
| 2 | ՀԷՑ ՓԲԸ | 0.6 | Մերձմոսկովյան ԲԲԸ | 3.8 |
| 3 | Արեմպա Ինթերնեյշնլ ՍՊԸ | 0.58 | Արեմպա Ինթերնեյշնլ ՍՊԸ | 0.54 |
| 4 | Այյունեթվորքս ՍՊԸ | 0.36 | Այյունեթվորքս ՍՊԸ | 0.39 |
| 5 | Ագարակ ԲԲԸ | 0.33 | Հարմոնիա տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ | 0.24 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարներ, մլրդ դրամ** | **3.77** | | **11.37** |
| | Պատվիրատուի ընդհանուր գնումները, մլրդ դրամ | 5.6 | | 13.3 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարի մասնաբաժինը պատվիրատուի ընդհանուր գնումներում, %** | **67** | | **85** |

**Աղյուսակ 17. Ոստիկանության խոշորագույն մատակարարները**

| | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|
| 1 | Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ | 3.3 | Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ | 3.9 |
| 2 | Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ | 2.1 | Սիփիէս Օիլ ՍՊԸ | 1.2[17] |
| 3 | ՀԷՑ ՓԲԸ | 1.8 | Բիլլ Սթոուն ՍՊԸ | 0.9 |
| 4 | Ուկռինվեստ ՍՊԸ | 1.4 | Ֆլեշ ՍՊԸ | 0.89 |
| 5 | Հայփոստ ՓԲԸ | 0.9 | Հայփոստ ՓԲԸ | 0.57 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարներ, մլրդ դրամ** | **9.5** | | **7.46** |
| | Պատվիրատուի ընդհանուր գնումները, մլրդ դրամ | 16.3 | | 13.2 |
| | **Ընդամենը 5 խոշոր մատակարարի մասնաբաժինը ընդհանուր գնումներում, %** | **58** | | **56** |

Ինչպես նկատում ենք, և՛ 2018թ., և՛ 2019թ. մատակարարների առումով ամենակենտրոնացված պատվիրատուների շարքում Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն ու ՊԵԿ-ն են, ընդ որում եթե առաջինի դեպքում նկատվում է կենտրոնացվածության նվազման միտում, ապա երկրորդ պատվիրատուի դեպքում հակառակ միտումն է: Պաշտպանության նախարարության և Ոստիկանության գնումներում ևս նկատվում է մատակարարների միջինից բարձր կենտրոնացվածություն:

Դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ մատակարարների առումով ամենաքիչ կենտրոնացվածություն ունեցող պատվիրատուն Առողջապահության նախարարությունն է:

## Հաղթող մասնակիցների ուսումնասիրություն

Մոնիտորինգի շրջանակներում փորձ է կատարվել ուսումնասիրել, թե ինչպիսին է եղել հաղթող մասնակիցների կառուցվածքը:

2019թ. ընդհանուր 232.7 մլրդ դրամը բաշխվել է շուրջ 3452 հաղթողների միջև, իսկ 2018թ.՝ 180.1 մլրդ դրամը բաշխվել է շուրջ 3061 հաղթողների միջև:

Աղյուսակ 18-ում և 19-ում ներկայացված են 2018թ. և 2019թ. 10 ամենախոշոր հաղթողները:

[17] Համաձայն ARMEPS կայքի տվյալների, 2019թ. Ոստիկանությունը կնքել է 1,042,771,100 դրամի պայմանագիր Սիփիէս Օիլ ՍՊԸ-ի հետ և 238,854,100 դրամի պայմանագիր Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ-ի հետ:

Աղյուսակ 18. Հանրային գնումների խոշորագույն 10 հաղթողները, 2018թ.

| | Հաղթող մասնակիցը | Գեներացված պարտավորությունը, մլրդ դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ |
|---|---|---|---|
| 1 | Ֆլեշ ՍՊԸ | 8.8 | 124 |
| 2 | ՀԷՑ ՓԲԸ | 7.1 | 121 |
| 3 | Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ | 4.5 | 173 |
| 4 | Սբ. Գրիգոր Լուսավորիչ ՓԲԸ | 4.4 | 14 |
| 5 | Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ | 3.6 | 1 |
| 6 | Էրեբունի  բժշկական կենտրոն | 3.2 | 10 |
| 7 | Արաբկիր Բժշկական Համալիր-ԵԴԱԻ ՍՊԸ | 3 | 11 |
| 8 | Ավանգարդ ՍՊԸ | 3 | 16 |
| 9 | Կապավոր ՍՊԸ | 2.7 | 7 |
| 10 | Նատալի Ֆարմ | 2.65 | 173 |
| | **Ընդամենը 10 խոշոր հաղթողներ** | **43.45** | **650** |
| | Ընդամենը գնումներ | 180.1 | 14233 |
| | **10 խոշոր մատակարարների մասնաբաժինը ընդհանուր գնումներում** | **24%** | **5%** |

Աղյուսակ 19. Հանրային գնումների խոշորագույն 10 հաղթողները, 2019թ.

| | Հաղթող մասնակիցը | Գեներացված պարտավորությունը, մլն դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ |
|---|---|---|---|
| 1 | Էյ Էմ Փի Ջի գրուպ  ՍՊԸ | 6.8 | 13 |
| 2 | Մաքս Օիլ ՍՊԸ | 6.6 | 75 |
| 3 | Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ | 6 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Մերձմոսկովյան ԲԲԸ | 5.4 | 7 |
| 5 | Ֆլեշ ՍՊԸ | 5.2 | 83 |
| 6 | Սբ. Գրիգոր Լուսավորիչ ՓԲԸ | 4.37 | 15 |
| 7 | Կապավոր ՍՊԸ | 3.92 | 4 |
| 8 | Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ | 3.88 | 2 |
| 9 | Էրեբունի բժշկական կենտրոն | 3.7 | 16 |
| 10 | Նատալի Ֆարմ | 3.1 | 130 |
| | **Ընդամենը 10 խոշոր հաղթողներ** | **48.7** | **341** |
| | Ընդամենը գնումներ | 232.7 | 16586 |
| | **10 խոշոր մատակարարների մասնաբաժինը ընդհանուր գնումներում** | **21%** | **2%** |

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակների տվյալներից, 2018 և 2019թթ. 10 խոշոր հաղթողների հետ պատվիրատուները կնքել են համապատասխանաբար շուրջ 43,5 և 48,7 մլրդ դրամի պայմանագրեր, ինչը երկու ժամանակահատվածում կազմում է ընդհանուր գնումների մոտ 21-24%-ը: Միևնույն ժամանակ, քանակային առումով պատկերը այլ է. 2019թ. խոշորագույն մատակարարների հետ կնքվել են 341 պայմանագրեր, ինչը կազմում է ընդհանուրի շուրջ 2%-ը, իսկ ահա 2018թ. նմանատիպ պայմանագրերի թիվը կազմել է 650, ինչն էլ կազմում է ընդհանուրի շուրջ 5%-ը:

Այսպիսով, չնայած 2019թ. հանրային գնումների 10 խոշորագույն մատակարարների կենտրոնացվածությունը քանակային առումով նվազել է նախորդ տարվա համեմատ, սակայն արժեքային առումով այն գրեթե չի փոփոխվել:

Միևնույն ժամանակ, երկու ժամանակաշրջանի ցանկի ուսումնասիրությունը վկայում է, որ խոշորագույն մատակարարներից վեցը կրկին ընդգրկվել են տասնյակում և նրանց պայմանագրային պարտավորության արժեքը հիմնականում ավելացել է, բացառությամբ Ֆլեշ ՍՊԸ-ի և Սբ. Գրիգոր Լուսավորիչ ՓԲԸ-ի (Աղյուսակ 9):

## Կնքված պայմանագրերի ծավալը և կառուցվածքը /ոչ մրցակցային գնումները/

Պետգնումների հաշվետվողականության կայքի միջոցով գեներացվող տվյալների համաձայն՝ պատվիրատուների կողմից կնքված պայմանագրերի ծավալի և կառուցվածքի վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 20-ում:

**Աղյուսակ 20. Կնքված պայմանագրերի ծավալը և կառուցվածքը, 2018 և 2019թթ.**

| | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|
| **Գնման ընթացակարգը** | **Պայմանագրերի քանակը, հատ** | **Պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ** | **Պայմանագրերի քանակը, հատ** | **Պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ** |
| **Բաց մրցույթ** | 637 | 42 | 270 | 15.8 |
| **Հրատապ բաց մրցույթ** | 125 | 22 | 184 | 38.3 |
| **Էլեկտրոնային աճուրդ** | 745 | 2.5 | 1090 | 16.3 |
| **Գնանշման հարցում** | 6619 | 25 | 7351 | 30.8 |
| **Մեկ անձ** | **5746** | **87.6** | **6298** | **112.9** |
| **Հրատապ մեկ անձ** | **74** | **0.8** | **300** | **16.6** |
| **Գնում չհանդիսացող ծախս** | 283 | 0.7 | 1093 | 2 |
| **Ընդամենը** | **14233** | **180.1** | **16586** | **232.7** |

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակի տվյալներից, **2019թ.** կատարվել են **6598 ոչ մրցակցային գնումներ** (մեկ անձ և հրատապ մեկ անձ), ինչի արդյունքում գեներացվել է շուրջ **129.5 մլրդ դրամի** պարտավորություն: Իսկ **2018թ.** կատարվել են **5820 ոչ մրցակցային գնումներ**՝ արդյունքում գեներացնելով շուրջ **88.4 մլրդ դրամի** պարտավորություն:

Ոչ մրցակցային գնումների քանակային և արժեքային տվյալները եռամսյակային կտրվածքով ներկայացված են Գծապատկեր 3-ում և 4-ում:

**Գծապատկեր 3. Ոչ մրցակցային գնումներն ըստ քանակի, 2018 և 2019թթ. եռամսյակային կտրվածքով**



**Գծապատկեր 4. Ոչ մրցակցային գնումներն ըստ արժեքի, 2018 և 2019թթ. եռամսյակային կտրվածքով**




Առավել հետաքրքրական է գնման ընթացակարգերի և հատկապես ոչ մրցակցային ձևերի կառուցվածքային ուսումնասիրությունը, որի արդյունքները ներկայացված են Գծապատկեր 5-ում և 6-ում:

**Գծապատկեր 5. Կնքված պայմանագրերի քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| **Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ.** | **Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ.** |
|---|---|






**Գծապատկեր 6. Կնքված պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ. | Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ. |
|---|---|







Համաձայն վերոնշյալ գծապատկերների տվյալների, **2019թ. ոչ մրցակցային գնումների** մասնաբաժինը ընդհանուր գնումներում **քանակական առումով** կազմել է շուրջ **40%**, իսկ **արժեքային առումով՝ 56%**:

**2018թ.** այս ցուցանիշը **քանակական առումով** կազմել է **շուրջ 41%**, իսկ **արժեքային առումով՝** շուրջ **50%**:

Այսպիսով, չնայած նախորդ տարվա համեմատ 2019թ. ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում քանակապես աննշան փոփոխության է ենթարկվել, սակայն **արժեքային առումով այն ավելացել է շուրջ 6%-ով**, ինչը բավական մտահոգիչ է:

Ոչ մրցակցային ընթացակարգերի վերլուծության շրջանակում հետաքրքրական է նաև դրանք առավել հաճախ կիրառող պատվիրատուների ուսումնասիրությունը (Աղյուսակ 21 և 22):

**Աղյուսակ 21. Ոչ մրցակցային հիմքով հիմնական պատվիրատուները, 2018թ.**

| | Պատվիրատու | Ոչ մրցակց. հիմքով պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ | Մասնաբաժինը ընդհանուր ոչ մրցակցային գնումներում, % | Մասնաբաժինը (%) պատվիրատուի ընդհանուր գնումներում (մլրդ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Առողջապահության նախարարություն | 62.8 | 71 | 94% (67) |
| 2 | Պաշտպանության նախարարություն | 6.6 | 8 | 18% (35,1) |
| 3 | Ոստիկանություն | 6.6 | 7 | 47% (14) |
| 4 | Արտաքին գործերի նախարարություն (այդ թվում՝ ԱԳՆ պետական | 2.19 | 3 | 99% (2.2) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արարողակարգի ծառայություն) | | | |
| 5 | Արդարադատության նախարարություն (այդ թվում՝ քրեակատարողական ծառայություն և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն) | 1.9 | 2 | 53% (3.6) |
| 6 | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այդ թվում՝ Սոցիալական ապահովության ծառայություն) | 1.42 | 1.6 | 58% (2.45) |
| 7 | Կրթության և գիտության նախարարություն | 1 | 1.1 | 91% (1.1) |
| 8 | Երևանի քաղաքապետարան | 0.9 | 1.0 | 9% (10.8) |
| 9 | ԱԱԾ | 0.86 | 1.0 | 39% (2.2) |
| 10 | ՊԵԿ | 0.76 | 0.9 | 14% (5.6) |
| 11 | Դատական դեպարտամենտ | 0.53 | 0.6 | 53% (1) |
| 12 | Վարչապետի աշխատակազմ | 0.39 | 0.4 | 35% (1.1) |
| 13 | ԱԻՆ | 0.29 | 0.3 | 30% (0.97) |
| 14 | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | 0.23 | 0.3 | 64% (0.36) |
| 15 | Անշարժ գույքի կադաստրի կոմիտե | 0.22 | 0.3 | 16% (1.4) |
| | **Ընդհանուր ոչ մրցակցային գնումներ** | **88.4** | **100** | |

**Աղյուսակ 22. Ոչ մրցակցային հիմքով հիմնական պատվիրատուները, 2019թ.**

| | Պատվիրատու | Ոչ մրցակց. հիմքով պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ | Մասնաբաժինը ընդհանուր ոչ մրցակցային գնումներում, % | Մասնաբաժինը (%) պատվիրատուի ընդհանուր գնումներում (մլրդ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Առողջապահության նախարարություն | 86.3 | 67 | 95% (90.9) |
| 2 | Տարածքային կառավարման և | 9.1 | 7 | 55% (18.3) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | զարգացման նախարարություն | | | |
| 3 | Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ ՊՀ | 7.16 | 6 | 99% (7.2) |
| 4 | Պաշտպանության նախարարություն | 6.7 | 5.6 | 19% (34.9) |
| 5 | Ոստիկանություն | 5.5 | 5 | 43% (12.9) |
| 6 | ՊԵԿ | 4.1 | 3 | 31% (13.3) |
| 7 | ԷԵԲՊՆ ջրային կոմիտե | 2.3 | 2 | 77% (2.99) |
| 8 | Կրթության և գիտության նախարարություն | 1.13 | 1 | 61% (1.84) |
| 9 | Արդարադատության նախարարություն (այդ թվում՝ քրեակատարողական ծառայություն և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն) | 1.11 | 0.9 | 34% (3.29) |
| 10 | Ֆինանսների նախարարություն | 0.48 | 0.4 | 67% (0.72) |
| 11 | ՀԱԷԿ | 0.47 | 0.4 | 10% (4.5) |
| 12 | Դատական դեպարտամենտ | 0.46 | 0.4 | 27% (1.7) |
| 13 | Վարչապետի աշխատակազմ | 0.44 | 0.4 | 47% (0.94) |
| 14 | Արտաքին գործերի նախարարություն (այդ թվում՝ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայություն) | 0.37 | 0.3 | 79% (0.47) |
| 15 | Երևանի քաղաքապետարան | 0.26 | 0.2 | 6% (4.7) |
| | Ընդհանուր ոչ մրցակցային գնումներ | **129.5** | **100** | |

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակներում բերված տվյալներից, ոչ մրցակցային ընթացակարգերը առավել հաճախ կիրառող պատվիրատուների ցանկը քիչ փոփոխությունների է ենթարկվել:

Ընդհանուր առմամբ, ՀՀ պետգնումների օրենսդրության մեջ հստակորեն սահմանվում են ոչ մրցակցային գնումների իրականացման պայմանները: Մասնավորապես, Գնումների օրենքի 23-րդ հոդվածով սահմանվում է, որ գնումը կարող է կատարվել մեկ անձից եղանակով, եթե՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.
2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.
3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝
   - լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և
   - դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով.
4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը (1 մլն դրամը)
5) գնումն իրականացվում է ՀՀ տարածքից դուրս:

Այս գնումների իրականացման հավելյալ պայմանները սահմանվում են Կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ: Մասնավորապես, սույն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետով ներկայացված է հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով մեկ անձից կատարվող գնումների ցանկը[18], որը պարբերաբար ենթարկվում է փոփոխությունների: Այս ցանկում ընդգրկված են 39 հոդվածներ, սակայն հետազոտության արդյունքները վկայում են, որ որոշ գնումների մասով հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքը մի փոքր կասկածների տեղիք է տալիս և որոշ դեպքերում շահարկվում է պատվիրատուների կողմից ոչ մրցակցային ընթացակարգերի առավել հաճախ կիրառության նպատակով:

Կառավարության N 526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում են հրատապության հիմքով ոչ մրցակցային գնումների իրականացման պայմանները: Մասնավորապես, գնումները կարող են կատարվել հրատապ մեկ անձից հետևյալ հիմնական դեպքերում՝

- ✓ Արտակարգ իրավիճակներում: Սույն ենթակետի համաձայն հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվեն այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է.
- ✓ Պետության կամ համայնքների կարիքների համար գնումների դեպքում համապատասխանաբար ՀՀ կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող

---
[18] https://www.arlis.am/documentview.aspx?docid=142724

լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների որոշմամբ անհետաձգելի համարված այլ դեպքերում.

- ✓ Չկանխատեսված իրավիճակների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում: Ընդ որում, հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից մինչև 80 օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվեն այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ դեպքերում վերոնշյալ դրույթները ևս շահարկվում են պատվիրատուների կողմից այն առումով, որ հրատապության հիմքով ոչ մրցակցային ձևի կիրառման պատճառաբանությունները երբեմն այնքան էլ համոզիչ չեն լինում և ավելի շատ վկայում են պատվիրատուների որոշակի կարողությունների պակասի և արդյունավետ պլանավորման և գնումների իրականացման հետ կապված խնդիրների մասին:

Հաշվի առնելով վերոնշյալը, մոնիտորինգի շրջանակներում ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից փորձ է կատարվել տարանջատել այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված և այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները:

Որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված գնումներ են դիտարկվել հետևյալ ուղղություններով ձեռքբերումները՝

- ✓ Առողջապահական ծառայություններ
- ✓ Հանրային հեռուստատեսության , ռադիոընկերության և հոգևոր-մշակութային հեռուստատեսության գործունեության ապահովում
- ✓ Էլեկտրականության բաշխում
- ✓ Հավատարմագրային կառավարման ծառայություններ (Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ, Արփա-Սևան ԲԲԸ և այլն)
- ✓ Փոստային ծառայություններ
- ✓ Գազի բաշխում և սպասարկում
- ✓ Դասագրքերի տպագրություն
- ✓ Միջազգային կառավարիչների, խորհրդատուների ծառայություններ
- ✓ Հեղինակային հսկողության ծառայություններ
- ✓ Ջրամատակարարում
- ✓ Այլ

Ի դեպ, վերոնշյալ ուղղությունների տարանջատումը որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված իրականացվել է որոշակի վերապահումներով, քանի որ որոշ դեպքերում, օրինակ դասագրքերի տպագրության և հեղինակային հսկողության ծառայություններ պարագայում, շուկայում առկա են տարբեր մատակարարներ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք պայմանավորված են հեղինակային և հարակից իրավունքներով, որոնք կանխորոշվում են մինչև գնման գործընթացի կազմակերպումը (դասագրքերի հեղինակների ընտրության և շինարարության նախագծման փուլում), այս ուղղությունները դիտարկվել են որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված գնումներ: Այսպիսով, 2019թ. այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված ոչ մրցակցային գնումների կառուցվածքը  ներկայացված է Աղյուսակ 23-ում:

**Աղյուսակ 23. Այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված ոչ մրցակցային գնումների կառուցվածքը, 2019թ.**

| Այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված ոչ մրցակցային ուղղությունը | Մեկ անձի հիմքով կատարված ընթացակարգերի թիվը, հատ | Մեկ անձի հիմքով կատարված գնումների ծավալը, մլրդ դրամ |
|---|---|---|
| Առողջապահական ծառայություններ | 1186 | 72.2 |
| Հանր. հեռուստատես., ռադիոընկեր. և հոգ.-մշակ. հեռուստատես.գործունեության ապահովում | 3 | 7.2 |
| Հավատարմագրային կառավարման ծառայություններ (Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ) | 2 | 3.9 |
| Հավատարմագրային կառավարման ծառայություններ (Արփա-Սևան ԲԲԸ) | 2 | 2 |
| Էլեկտրականության բաշխում | 37 | 2.4 |
| Փոստային ծառայություններ | 119 | 1.4 |
| Գազի բաշխում և սպասարկում | 20 | 1.4 |
| Դասագրքերի տպագրություն | 9 | 0.9 |
| Միջազգ. կառավարիչների, խորհրդատուների ծառայություններ | 2 | 0.4 |
| Հեղինակային հսկողության ծառայություններ | 175 | 0.2 |
| Ջրամատակարարում | 30 | 0.01 |
| Այլ | 20 | 0.7 |
| Ընդհամենը նշվածը | **1605** | **92.71** |
| 1 մլն դրամը չգերազանցող գնումներ | **4737** | **1** |

Ըստ վերոնշյալ ուսումնասիրության արդյունքների 2019թ.՝

▶ Այլընտրանքի բացակայության պարագայում ոչ մրցակցային եղանակով կնքվել է շուրջ 92,7 մլրդ դրամի 1605 պայմանագրեր:

▶ Կնքվել է 1 մլն դրամի շեմը չգերազանցող մոտ 4737 պայմանագիր՝ շուրջ 1 մլրդ դրամի:

▶ Վերոնշյալ գնումները կազմում են 2019թ. ընդհանուր գնումների (232.7 մլրդ դրամ) շուրջ 40%-ը կամ ոչ մրցակցային գնումների (129.5 մլրդ դրամ) 72%-ը:

▶ Հաշվի առնելով այս հաշվարկները, **2019թ. այլընտրանքի առկայության պարագայում** ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները **արժեքային արտահայտմամբ** կազմում են ընդհանուր ոչ մրցակցային գնումների շուրջ **28%**-ը կամ ընդհանուր գնումների **11%-ը**, իսկ **քանակային առումով**՝ ընդհանուր ոչ մրցակցային գնումների մոտ **4%**-ը կամ ընդհանուր գնումների **2%-ը**:

▶ Այսպիսով, համաձայն ՀՔՀԱԿ ՀԿ-ի հաշվարկների, **այլընտրանքի առկայության պարագայում** ոչ մրցակցային եղանակով 2019թ. կնքվել են մոտ **273** պայմանագրեր, որի արդյունքում գեներացվել է շուրջ **25,1 մլրդ դրամի** պարտավորություն:

Մոնիտորինգի շրջանակներում փորձ է կատարվել խմբավորել այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային գնումները ըստ խոշորացված ենթաուղղությունների (Աղյուսակ 24):

Այլընտրանքի առկայության պարագայում 15 մլն դրամի սահմանաչափը գերազանցող ոչ մրցակցային գնումների ավելի մանրամասն նկարագիրը ներկայացված է Հավելված 1-ում:

**Աղյուսակ 24. Այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային գնումները ըստ խոշորացված ենթաուղղությունների, 2019թ.**

| Ոչ մրցակցային հիմքով ծախսային ենթաուղղություն | Ոչ մրցակց. հիմքով գեներացված պարտավոր. ծավալը, մլն դրամ | Ոչ մրցակց. հիմքով կնքված պայմանագրերի թիվը, հատ | Ենթախմբի ըստ պայմանագր. ծավալի խոշորագույն մատակարարները | Պայմանագր. ծավալը, մլն դրամ |
|---|---|---|---|---|
| **Հիմնանորոգման աշխատանքներ և Մաքսային սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքներ, որից՝** | **9305** | **37** | **Մերձմոսկովյան ԲԲԸ** | **5328** |
| | | | **Կապավոր ՍՊԸ** | **3877** |
| | | | **Արարատ-ճանշին ՍՊԸ** | **759** |
| *Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝* | *8916* | *27* | *Կապավոր ՍՊԸ* | *3877* |
| | | | *Մերձմոսկովյան ԲԲԸ* | *1497* |
| *ՊԵԿ՝* | *3,89* | *10* | *Մերձմոսկովյան ԲԲԸ* | *3831* |
| **Ապահովագրություն, որից՝** | **3749** | **164** | **Ինգո Արմենիա ՓԲԸ** | **1184** |
| | | | **Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ** | **1182** |
| | | | **Նաիրի Ինշուրանս ԱՍՊԸ** | **619,7** |
| | | | **Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ** | **556,2** |
| *Առողջապահության նախարարություն՝* | *3513* | *8* | *Ինգո Արմենիա ՓԲԸ* | *1094* |
| | | | *Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ* | *1078* |
| | | | *Նաիրի Ինշուրանս ԱՍՊԸ* | *603,9* |
| | | | *Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ* | *536,5* |
| *ՊՆ՝* | *95,3* | *4* | *Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ* | *77,3* |
| | | | *Նաիրի Ինշուրանս ԱՍՊԸ* | *10,9* |
| | | | *Սիլ Ինշուրանս ԱՓԲԸ* | *7* |
| *Ոստիկանություն՝* | *64,8* | *10* | *Ինգո Արմենիա ՓԲԸ* | *58,5* |
| | | | *Նաիրի Ինշուրանս ԱՍՊԸ* | *3,9* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | *Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ* | *2,4* |
| **Վառելիք, որից՝** | **1438** | **10** | **Մաքս Օիլ ՍՊԸ** | **1347** |
| | | | **Ֆլեշ ՍՊԸ** | **47,7** |
| | | | **Սիփիէս Օիլ ՍՊԸ** | **41,3** |
| *ՊՆ՝* | *1386* | *2* | *Մաքս Օիլ ՍՊԸ* | *1347* |
| | | | *Սիփիէս Օիլ ՍՊԸ* | *38,3* |
| *Ջրառ ՓԲԸ՝* | *47,7* | *2* | *Ֆլեշ ՍՊԸ* | *47,7* |
| **Ներկայացուցչական և արարողակարգային ծառայություններ, որից՝** | **875** | **1586** | **Մառկոտել ՍՊԸ** | **100** |
| | | | **Էքսպոմեդիա ՍՊԸ** | **90,9** |
| | | | **Էյչ Այ Ուայ** | **42,8** |
| *ԱԳՆ և ԱԳՆ ՊԱԾ՝* | *6341* | *650* | *Էքսպոմեդիա ՍՊԸ* | *90,9* |
| | | | *Բիզնես Քար Սերվիս ՍՊԸ* | *23,1* |
| | | | *Սալոն Ռեստորան ՍՊԸ* | *23,5* |
| | | | *Էնի Ռոուզ ՍՊԸ* | *18* |
| *ՊՆ՝* | *187,8* | *13* | *Մառկոտել ՍՊԸ* | *100* |
| | | | *Էյչ Այ Ուայ* | *40* |
| | | | *Ռեդի-Սթեդի ՍՊԸ* | *25,8* |
| | | | *ԱԴՏՄ Հարավ ՍՊԸ* | *16* |
| *Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն՝* | *52,2* | *81* | *Էմ Բի Ջի Գրուպ ՍՊԸ* | *5,4* |
| | | | *Դոմինո Փրոդաքշն* | *4,8* |
| | | | *Իզի Քառ ՍՊԸ* | *4,4* |
| *ԱԱԾ՝* | *41,4* | *26* | *Օնիրա Քլաբ ՍՊԸ* | *24,9* |
| | | | *Մուլտի Ռեստ Հաուս ՍՊԸ* | *3,7* |
| *Վարչապետի աշխատակազմ՝* | *30,6* | *21* | *Լոմասիստեմս ՍՊԸ* | *7,5* |
| | | | *Առողջսպասարկում* | *6,5* |
| | | | *Կերբեդանց Ջեյ Դաբլ Յու* | *5,8* |
| *ՊԵԿ՝* | *21,2* | *22* | *Օքեյ Տուր ՍՊԸ* | *10* |
| | | | *Դայմոնդ Տուր ՍՊԸ* | *3,9* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Միջոցառումների կազմակերպում, որից՝** | **713** | **86** | **Ֆակտորի Փրոդաքշն ՍՊԸ** | **165,4** |
| | | | **Լոռե Գրուպ/հոլդինգ** | **86,1 / 29** |
| | | | **Կայուն Դպրոց.Սնունդ Հիմնադրամ** | **77,7** |
| | | | **Սթեյջ Սթայլ** | **66,7** |
| *ԵՔ՝* | 252,4 | 13 | *Ֆակտորի Փրոդաքշն ՍՊԸ* | *137,9* |
| | | | *Սթեյջ Սթայլ* | *66,7* |
| | | | *ՀաԷկ-Ի Շինարարություն* | *29,9* |
| *Վարչապետի աշխատակազմ՝* | *181,5* | *47* | *Ֆակտորի Փրոդաքշն ՍՊԸ* | *27.5* |
| | | | *Կ.Դեմիրճյանի անվ. մարզահամերգային համալիր ՊՈԱԿ* | *23,1* |
| | | | *Ա/Ձ Գևորգ Աղաբայան* | *17.9* |
| | | | *Ափ Ընդ Ափ Փրոդաքշն* | *11* |
| *ՀՀ սփյուռքի նախարարություն՝* | *111,1* | *2* | *Լոռե Գրուպ ՍՊԸ* | *86* |
| | | | *Լոռե Հոլդինգ ՍՊԸ* | *25* |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ | 77,7 | 1 | *Կայուն Դպրոց. Սնունդ Հիմնադրամ* | *77,7* |
| **Համարանիշների տպագրման աշխատանքներ** | **511** | **7** | **Բիլլ Սթոուն ՍՊԸ** | **462,6** |
| | | | **Զնակ Ստանդարտ** | **48,4** |
| **Սննդամթերք** | **332.7** | **5** | **Մաստերֆուդ ՍՊԸ** | **286.6** |
| | | | **Ավանգարդ ՍՊԸ** | **34.9** |
| | | | **Արզնու Տոհմային Թռչուն** | **29.2** |
| **Հանդերձանք** | **178.4** | **3** | **Սայլակ** | **89.6** |
| | | | **Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ** | **66.3** |
| | | | **Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ** | **63.5** |

# Բողոքարկման համակարգի մոնիտորինգ

Գնումների գործընթացի բողոքարկման հետ կապված հիմնական դրույթները սահմանվում են Գնումների մասին օրենքի (ԳՄՕ)[19] 46-51-րդ հոդվածներով և «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» Ֆինանսների նախարարի N 600-Ն հրամանով[20]:

Ընդհանուր առմամբ, բողոքները քննող անձինք[21] իրենց գործունեությունն իրականացնում են երկու ընթացակարգով.

1) բողոքարկման ընթացակարգ, որի դեպքում քննվում են գնումների ընթացքում պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ տարբեր շահագրգիռ անձանց կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքները:
2) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակում) ներառելու ընթացակարգ, որի դեպքում քննվում են լիազորված մարմնի (Ֆինանսների նախարարության) համապատասխան գրությամբ ներկայացված պահանջները:

Համաձայն ԳՄՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի մասնակիցն ընդգրկվում է գնումների Սև ցուցակում, եթե `

- ✓ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,
- ✓ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,
- ✓ հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով, օրենքի վերոնշյալ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները` համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին (ՖՆ), որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների Սև ցուցակում ներառելու ընթացակարգ: Ընդհանուր առմամբ, բողոքարկման համակարգի

---

[19] Ընդունվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ մտել 2017թ. ապրիլի 25-ին:
[20] Ուժի մեջ է մտել 2018թ. դեկտեմբերի 18-ին:
[21] 2018թ. մայիսի 17-ի N 567-Ն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց թիվը պետք է լինի երկու անդամ, որոնք պաշտոնավարում են հինգ տարի ժամկետով:

մանրամասն ուսումնասիրությունները վկայում են, որ գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտման շրջանակներում մասնակիցները (ընտրված կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները) հայտնվում են գնումների Սև ցուցակում հետևյալ հիմնական պատճառներով՝

- ✓ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան 50.000 դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (այդ թվում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարների գծով) ունենալու դեպքում;
- ✓ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու պարագայում;
- ✓ ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու դեպքում;
- ✓ հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու պարագայում;
- ✓ որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու դեպքում:

Համաձայն պետգնումների պաշտոնական կայքի Բողոքարկման բաժնում ներկայացված տվյալների[22], 2019թ. բողոքները քննող անձանց կողմից ընդունվել է շուրջ 1224 որոշում, որից 480-ը հանդիսացել են միջանկյալ որոշումներ (բողոքի քննությունը երկարաձգվել է 10 օրացույցային օրով), 21-ի դեպքում կայացվել է առանց քննության թողնելու կամ ընթացակարգի քննությունը կասեցնելու որոշում (մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը), իսկ մնացած 723-ի մասով կայացվել է մերժման, բավարարման կամ մասնակի բավարարման որոշում[23]: 2019թ. կայացված որոշումների կառուցվածքը եռամսյակային կտրվածքով ներկայացված է Գծապատկեր 7-ում:

---

[22] http://gnumner.am/hy/page/boghoqneri_veraberyal_kayacats_oroshumner/
[23] Վերլուծությունը իրականացվել է 2020թ. մարտի 1-ի դրությամբ կայքում հրապարակված տվյալների նկատմամբ:

**Գծապատկեր 7. Բողոքները քննող անձանց կողմից ընդունված որոշումները, 2019թ. եռամսյակային կտրվածքով**




Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերից, 2019թ. 2-րդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ բողոքները քննող անձանց կողմից ընդունվել է բավական շատ միջանկյալ որոշում (204): Սա հավանաբար պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ այդ ժամանակաշրջանում բողոքները քննող անձանց (Միեր Անանյան և Էմիլ Սարգսյան) պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո նորընտիր անձինք (Գրիգոր Ներսիսյան և Լևոն Օհանյան) բողոքների քննությունը երկարաձգել են 10 օրացուցային օրով՝ փորձելով առավել մանրամասն ուսումնասիրել ներկայացված բողոքները: Այնուհետև, 3-րդ և 4-րդ եռամսյակներում այս մասով դիտվել է նվազման միտում:

Ընդհանուր առմամբ, համաձայն պետգնումների կայքի Բողոքարկման բաժնում ներկայացված տվյալների, 2019թ. ներկայացված բողոքների մասով ընդունվել է մասնակիցներին գնումների սև ցուցակում ներառելու վերաբերյալ 487 որոշում, ինչը շուրջ 12%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը (Աղյուսակ 25):

**Աղյուսակ 25. Մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու մասով ընդունված որոշումները, 2018 և 2019թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | **Որոշումների քանակը, հատ** | **Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %** | **Որոշումների քանակը, հատ** | **Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %** |
| Մերժվել է ցուցակում ներառումը | 262 | 58 | 209 | 43 |
| Բավարարվել է ցուցակում ներառումը | 172 | 42 | 278 | 57 |
| **Ընդամենը** | **434** | | **487** | |

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակի տվյալներից, նախորդ տարվա համեմատ 2019թ. ավելացել է մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառումը բավարարելու որոշումների մասնաբաժինը, ինչը ընդհանուր առմամբ հանգեցրել է Սև ցուցակում ներառված մասնակիցների թվի աճին:

Բողոքները քննող անձանց կողմից մասնակիցներին Սև ցուցակում ներառելու մասով կայացրած որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ բացառությամբ բողոքները քննող անձ Էմիլ Սարգսյանի, մնացած բողոքները քննող անձանց կայացրած որոշումների մասով առկա են նույնական միտումներ: Այս երեք անձանց կողմից քննված բողոքների արդյունքում մասնակիցները մեծամասամբ հայտնվել են Սև ցուցակում (53-63%), մինչդեռ Էմիլ Սարգսյանի ընդունած որոշումների մեջ՝ ցուցակում ներառումը ավելի շատ մերժվել է, քան բավարարվել (Գծապատկեր 8):

**Գծապատկեր 8. Բողոքները քննող անձանց կողմից մասնակիցներին ՍԿ ցուցակում ներառելու մասով կայացրած որոշումների վերլուծությունը, 2019թ.**




2019թ. գնումների ՍԿ ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերի հիմնական պատճառների կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 9-ում:

**Գծապատկեր 9. Գնումների ՍԿ ցուցակում ներառելու հիմնական պատճառների կառուցվածքը, 2019թ. տարեկան**




Այս ընթացակարգերի առավել մանրամասն ուսումնասիրության արդյունքները եռամսյակային և տարեկան կտրվածքներով ներկայացված են Աղյուսակ 26-ում և Գծապատկեր 10-ում:

## Աղյուսակ 26. Գնումների ՍԼ ցուցակում ներառելու հիմնական պատճառները, 2019թ. եռամսյակային կտրվածքով

| Բողոքի հիմքը | Քննված բողոքների քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. | 4-րդ եռ. | Ընդամենը |
| Օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու, այդ թվում՝ | 34 | 56 | 52 | 1 | 143 |
| *դրոշմանիշային վճարի պարտավորություններ* | *12* | *35* | *28* | *1* | *76* |
| *այլ հարկային պարտավորություններ* | *22* | *21* | *24* | *-* | *67* |
| Հրավերով սահմանված փաստաթղթերի հետ կապված | 29 | 53 | 58 | 71 | 211 |
| Պայմանագրի կնքումից կամ ընթ. մասն. հրաժարման հետ կապված | 2 | 7 | 14 | 12 | 35 |
| Պայմանագրային պարտավորությունների խախտման հետ կապված | 11 | 15 | 22 | 50 | 98 |
| **Ընդամենը** | **76** | **131** | **146** | **134** | **487** |

## Գծապատկեր 10. Գնումների ՍԼ ցուցակում ներառելու հիմնական պատճառները, 2019թ. եռամսյակային կտրվածքով



Ինչպես երևում է վերոնշյալ տվյալներից, 2019թ. 2-րդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ մոտ 1,7 անգամ աճել է մասնակիցներին գնումների սև ցուցակում ներառելու ընթացակարգերի թվաքանակը (76-ից 131): Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է եղել օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորությունների (հատկապես դրոշմանիշային վճարների) գծով առավել շատ դեպքերի արձանագրմամբ և հրավերով սահմանված փաստաթղթերի հետ կապված բողոքների թվի աճով:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ հիմքերով մասնակիցներին գնումների սև ցուցակում ներառելու մասով ընդունված որոշումների վերլուծությունը վկայում է, որ բացառությամբ դրոշմանիշային վճարների գծով պարտավորություններ ունենալու մասով ընդունված որոշումների, մնացած որոշումներում մեծամասամբ ընդունվել են ցուցակում ներառելու ընթացակարգը բավարարելու որոշումներ (Գծապատկեր 11):

**Գծապատկեր 11. Գնումների Սև ցուցակում ներառելու մասով ընդունված որոշումների վերլուծությունը, 2019թ.**




Այնուամենայնիվ, դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների մասով ընդունված որոշումների առումով, ՀԶՀԱԿ ՀԿ-ի կողմից արձանագրվել են որոշակի ռիսկային մոտեցումներ, որոնց պարզաբանումը մեջբերվում է հաջորդիվ: Նախ, հարկ է նշել, որ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին վճարվող դրոշմանիշային վճարների մասով պարտավորությունները սկսել են դիտարկվել որպես հայտերը մերժելու հիմնավորում և գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում միայն 2018թ. վերջից: Մասնավորապես, ՊԵԿ Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի Հարկային պարտավորություններ բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է եղել հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները

արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Այնուամենայնիվ, ինչպես երևում է բողոքները քննող անձանց կողմից քննված բողոքների ուսումնասիրությունից, գնումների մասնակիցների գերակշիռ մասը իրազեկված չէ դրոշմանիշային վճարի գծով առկա պարտավորության վերաբերյալ, քանի որ մասնակիցները հիմնականում առաջնորդվում են հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, որտեղ այս պարտավորությունները չեն երևում:

Ի լրումն, համաձայն ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Միևնույն ժամանակ, համաձայն վերոնշյալ օրենքի 10-րդ հոդվածի՝ դրոշմանիշային վճարը ՀՀ պետբյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հորկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և  տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և/կամ վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով, վերոնշյալ երկու օրենսդրական կարգավորումները հանգեցնում են որոշակի անորոշության, ինչի արդյունքում մասնակիցների համար հստակ չեն սահմանվում «խաղի կանոնները»:

2019թ. 1-ին եռամսյակում բողոքները քննող անձանց կողմից ընդունված որոշումների մոնիտորինգը վկայում է, որ քննող երկու անձինք (Էմիլ Սարգսյան և Մհեր Անանյան) դրոշմանիշային վճարների մասով պարտավորությունների առկայության բոլոր դեպքերի/ բողոքների վերաբերյալ կայացրել են որոշումներ ի օգուտ մասնակիցների (պարտավորեցնելով դադարեցնել հանձնաժողովի կողմից կայացված հայտը մերժելու որոշումը կամ մերժելով մասնակցին Սև ցուցակում ներառելու ընթացակարգը):

Այս առումով, հարկ է նշել, որ 2019թ. հունվարի 1-ից մինչև ապրիլի 11-ը ընկած ժամանակահատվածում վերոնշյալ երկու քննող անձանց կողմից ընդունված որոշումների մասով առկա են նույնական միտումներ/դիրքորոշումներ:

Ընդունված որոշումներում հիմնականում մեջբերվել է այն հիմնավորումը, որ դրոշմանիշային վճարը տվյալ պայմաններում չի դիտարկվում որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Միևնույն ժամանակ, 2019թ. ապրիլին ընտրված բողոքները քննող նոր անձանց (Գրիգոր Ներսիսյանի և Լևոն Օհանյանի) կողմից ընդունված որոշումների մասով առկա դիրքոշումները տարբեր են: Մասնավորապես, Լևոն Օհանյանը,

մեջբերելով վերոնշյալ հիմնավորումը, դրոշմանիշային վճարների մասով պարտավորությունների առկայության բոլոր բողոքների վերաբերյալ կայացրել է որոշումներ ի օգուտ մասնակիցների, մինչդեռ, մյուս քննող անձ Գրիգոր Ներսիսյանը այս առումով հիմնականում ընդունել է որոշումներ ի վնաս մասնակիցների՝ բավարարելով մասնակցին Սև ցուցակում ներառելու ընթացակարգերն և մերժելով մասնակիցների կողմից ներկայացված բողոքները:

Այսպիսով, դրոշմանիշային վճարի գծով պարտավորություններ ունենալու պատճառով բողոքները քննող անձ Գր. Ներսիսյանի կողմից ընդունված որոշումների համաձայն 17 մասնակից հայտնվել է գնումների Սև ցուցակում (Աղյուսակ 27):

**Աղյուսակ 27. Դրոշմանիշային վճարի գծով պարտավորություններ ունենալու պատճառով Սև ցուցակում հայտնված մասնակիցները, 2019թ.**

| | Մասնակիցը | Դրոշմանիշային վճարի պարտավորության չափը, դրամ | Որոշումը ընդունելու ամսաթիվը |
|---|---|---|---|
| 1 | Էկոդեզ ՍՊԸ | 29.000 | 16.05.19 |
| 2 | Վիժնմեդ ՍՊԸ | 1.000 | 17.05.19 |
| 3 | Էլեկտրոպրիբոր ՓԲԸ | 3.000 | 17.05.19 |
| 4 | Արմբիլդ ՍՊԸ | 3.000 | 17.05.19 |
| 5 | ԻՆ-ՎԻ ՍՊԸ | 47.000 | 17.05.19 |
| 6 | Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ | 39.000 | 17.05.19 |
| 7 | Նիգ-Ապարան ՍՊԸ | 144.000 | 30.05.19 |
| 8 | Պրեմիում Գազ ՍՊԸ | 8.000 | 31.05.19 |
| 9 | Մինորա մշակութային կենտրոն ՍՊԸ | 8.000 | 31.05.19 |
| 10 | Տեխնիկա Պլյուս ՍՊԸ | 15.000 | 13.06.19 |
| 11 | Տերտերյան և ընկերներ ՍՊԸ | 18.000 | 24.06.19 |
| 12 | Գևորգյան-Էքիզյան Բարեկամություն ՍՊԸ | 44.000 | 24.06.19 |
| 13 | Տիգման Գրուպ ՍՊԸ | 1.000 | 27.06.19 |
| 14 | Այբ-Տուր ՍՊԸ | 9.000 | 28.06.19 |
| 15 | Վարմէքս ՍՊԸ | 8.000 | 4.07.19 |
| 16 | Ա/Ձ Արմինե Բլբուլյան | 12.000 | 12.07.19 |
| 17 | Սոնատինա ՍՊԸ | 135.000 | 1.08.19 |

Սև ցուցակում հայտնված այս մասնակիցներից հատկապես ուշագրավ է ԻՆ-ՎԻ ՍՊԸ-ի դեպքը, քանի որ այս ընկերությանը դրոշմանիշային վճարի գծով 47.000

դրամի պարտավորություն ունենալու պատճառով Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվել է 3 ընթացակարգ, որից երկուսը մերժվել են (մայիսի 23 և 24-ին), իսկ մեկը բավարարվել է (մայիսի 17-ին Գրիգոր Ներսիսյանի կողմից): Փաստորեն, միևնույն հիմքով այս ընկերության նկատմամբ բողոքները քննող անձիք ընդունել են իրարամերժ որոշումներ, ինչի արդյունքում ի վերջո այս ընկերությունը հայտնվել է Սև ցուցակում:

Ի դեպ, ընկերությունը, մարտի 21-ին կատարել է պարտավորությունը՝ գանձապետական հաշվեհամարին վճարելով արձանագրված պարտավորության չափը գերազանցող գումար (500.000 դրամ), ինչը վկայում է, որ մասնակիցը չի փորձել խուսափել պարտավորությունից, այլ ինչպես մասնակիցներից մեծամասնությունը, բավարար տեղեկացված չի եղել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այդ պարտավորության առկայության մասին:

Բարեբախտաբար, այս հիմքով մասնակիցներին Սև ցուցակում ներառելու պրակտիկան կասեցվեց օրենսդրական փոփոխությունների շնորհիվ: Մասնավորապես, 2019թ. մայիսի 2-ին ընդունված և հունիսի 1-ից ուժի մեջ մտած Կառավարության 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N516-Ն որոշման[24] համաձայն, մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց շտկելու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների մասով առկա անհամապատասխանությունները: Այսուհետ, եթե մասնակիցը ներկայացնի կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը, ապա տվյալ անհամապատասխանությունը կհամարվի շտկված և նրա հայտը կգնահատվի բավարար: Այս բարեփոխումը դրական ազդեցություն ունեցավ բողոքարկման գործընթացների վրա, ինչը արտահայտվեց հարկային պարտավորություններ ունենալու պատճառով մասնակիցներին գնումների սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվող ընթացակարգերի քանակի կրճատմամբ: Մասնավորապես, ինչպես երևում է Աղյուսակ 16-ում բերված տվյալներից, 2019թ. 4-րդ եռամսյակում արդեն քննվել է օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորությունների (դրոշմանիշային վճարի) վերաբերյալ ընդամենը մեկ դեպք:

Ընդհանուր առմամբ, մասնակիցներին Սև ցուցակում ներառելու վերաբերյալ 2019թ. ընդունված որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ բացառությամբ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունների, այլ պատճառներով ներկայացված բողոքների մասով բողոքները քննող անձանց կողմից ընդունված որոշումներում հիմնականում նկատվում է նույնական միտումներ:

Համաձայն պետգնումների կայքի Բողոքարկման բաժնում ներկայացված տվյալների, 2019թ. տարեկան կտրվածքով պատվիրատուների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացված բողոքների վերաբերյալ ընդունվել է 236 որոշում, ինչը մի փոքր է տարբերվում նախորդ տարվա ցուցանիշից:

Նույն միտումն է նկատվում բավարարված բողոքների մասնաբաժնի առումով, մասնավորապես, և՛ 2018թ., և՛ 2019թ.բավարարված բողոքների մասնաբաժինը կազմել է 56-57% (Աղյուսակ 28):

[24] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130644

**Աղյուսակ 28. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով ընդունված որոշումները, 2018 և 2019թթ.**

| | 2018 | | 2019 | |
|---|---|---|---|---|
| | **Որոշումների քանակը, հատ** | **Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %** | **Որոշումների քանակը, հատ** | **Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %** |
| Մերժվել է | 95 | 43 | 103 | 44 |
| Բավարարվել է (նաև մասնակի) | 124 | 57 | 133 | 56 |
| **Ընդամենը** | **219** | | **236** | |

Պատվիրատուների գործողությունների դեմ 2019թ. ներկայացված բողոքների վերաբերյալ կայացված որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ բողոքները քննող անձանցից Միհր Անանյանի կողմից առավել հաճախակի են ընդունվել բողոքը լիովին կամ մասնակի բավարարելու որոշումներ (Գծապատկեր 12)

**Գծապատկեր 12. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով բողոքները քննող անձանց կայացրած որոշումների վերլուծությունը, 2019թ.**




2019թ. պատվիրատուների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառների կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 13-ում:

**Գծապատկեր 13. Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառների կառուցվածքը, 2019թ. տարեկան**




Այս ընթացակարգերի առավել մանրամասն ուսումնասիրության արդյունքները եռամսյակային և տարեկան կտրվածքներով ներկայացված են Աղյուսակ 29-ում և Գծապատկեր 14-ում:

**Աղյուսակ 29. Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառները, 2019թ. եռամսյակային կտրվածքով**

| | Քննված բողոքների քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Բողոքի հիմքը** | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. | 4-րդ եռ. | Ընդամենը |
| Օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային/դրոշմանիշային վճարի պարտավորություններ ունենալու վերաբերյալ | 21 | 24 | 3 | 0 | 48 |
| Հրավերով սահմանված փաստաթղթերի հետ կապված | 9 | 29 | 23 | 22 | 83 |
| Հրավերում թերությունների և խտրական մոտեցումների առկայության վերաբերյալ | 13 | 10 | 16 | 37 | 76 |
| Այլ | 6 | 9 | 9 | 5 | 29 |
| **Ընդամենը** | **49** | **72** | **51** | **64** | **236** |

**Գծապատկեր 14. Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառները, 2019թ. եռամսյակային կտրվածքով**




Ընդհանուր առմամբ, պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով ընդունված որոշումների վերլուծությունը վկայում է, որ տարբեր հիմքերով բողոքները հիմնականում լիովին կամ մասնակի բավարարվել են:

Հատկապես ուշագրավ է, որ հրավերում թերությունների և խտրական մոտեցումների առկայության վերաբերյալ ներկայացված բողոքների մասով մեծամասամբ ընդունվել են բավարարման որոշումներ (շուրջ 59%), ինչի արդյունքում պատվիրատուների գնահատող հանձնաժողովները հիմնականում պարտավորվել են դադարեցնել իրենց կայացրած որոշումները կամ տվյալ ընթացակարգերը չկայացած հայտարարել (Գծապատկեր 15):

**Գծապատկեր 15. Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով ընդունված որոշումների վերլուծությունը, 2019թ.**



Աղյուսակ 30-ում և 31-ում ներկայացված են այն պատվիրատուների ցանկը, ում գործողությունների դեմ առավել հաճախակի են բողոք ներկայացրել մասնակիցները:

**Աղյուսակ 30. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2018թ.**

| | Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են | Բավ. | Մերժ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | ՊՆ | 25 | 26 | 51 |
| 2 | Երևանի քաղաքապետարան | 11 | 5 | 16 |
| 3 | Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն | 3 | 5 | 8 |
| 4 | ՀԱԷԿ ՓԲԸ | 2 | 6 | 8 |
| 5 | ՊԵԿ | 1 | 4 | 5 |
| 6 | Աշխատանքի և սոց. հարցերի նախ. | 2 | 2 | 4 |
| 7 | Գավառի քաղաքապետարան | 3 | 1 | 4 |
| 8 | ԵՊՀ հիմնադրամ | 2 | 2 | 4 |
| 9 | Եր. Մխ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան հիմնադրամ | 2 | 1 | 3 |
| | **Ընդամենը նշված** | **51** | **52** | **103** |
| | Ընդամենը տարեկան | 124 | 95 | 219 |
| | **Մասնաբաժինը ընդհանուրում, %** | **41** | **54** | **47** |

**Աղյուսակ 31. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2019թ.**

| | Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են | Բավ. | Մերժ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | ՊՆ | 15 | 27 | 42 |
| 2 | Երևանի քաղաքապետարան | 14 | 12 | 26 |
| 3 | ՀԱԷԿ ՓԲԸ | 6 | 6 | 12 |
| 4 | Ոստիկանություն | 3 | 7 | 10 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **5** | Եր. Մխ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան հիմնադրամ | 4 | 4 | 8 |
| **6** | Սբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն ՓԲԸ | 7 | 0 | 7 |
| **7** | Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն | 5 | 1 | 6 |
| **8** | ՊԵԿ | 5 | 1 | 6 |
| **9** | Առողջապահության նախարարություն | 4 | 2 | 6 |
| | **Ընդամենը նշված** | **63** | **60** | **123** |
| | Ընդամենը տարեկան | 133 | 103 | 236 |
| | **Մասնաբաժինը ընդհանուրում, %** | **47** | **58** | **52** |

Ընդհանուր առմամբ, 2018 և 2019թթ. 9 պատվիրատուների դեմ ներկայացված բողոքները կազմել են տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր բողոքների համապատասխանաբար՝ 47 և 52%-ը:

Վերոնշյալ աղյուսակներում բերված տվյալներից երևում է, որ այս պատվիրատուների ցանկը էական փոփոխությունների չի ենթարկվել: Ինչպես նախորդ տարում, այնպես էլ 2019թ., ամենաշատը բողոքարկվել են ՊՆ կողմից կայացված որոշումները: 2019թ. բողոքները քննող անձանց կողմից ՊՆ-ի գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով 42 որոշում է կայացվել, ինչը 9-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Ընդհանուր առմամբ, բացի ՊՆ-ից և Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարությունից, երկու ժամանակաշրջանների ցանկերում ընդգրկված մյուս պատվիրատուների դեմ ներկայացված բողոքների թիվը աճել է:

# 2018-2019 թթ. գնումների ոլորտային ուսումնասիրություն

## Մեթոդաբանությունը և մոնիտորինգի ժամանակահատվածը

Մոնիտորինգի շրջանակներում իրականացվել է 2019 թ. ընթացքում Պաշտպանության նախարարության (ՊՆ), Ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի կողմից կատարված պետական գնումների ուսումնասիրություն, նախորդ տարվա նկատմամբ համեմատական վերլուծություն: Ուսումնասիրության առարկա են հանդիսացել փաստացի գնումները, դրանց կառուցվածքի ուսումնասիրությունը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի և/կամ խնդրահարույց պայմանագրերի նույնականացումը: Վերլուծությունն իրականացվել է բաց աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա:

Վերլուծության նպատակը առկա միտումների ուսումնասիրությունն և խնդրահարույց կամ հնարավոր կոռուպցիոն ռիսկեր պարունակող գնումների վերհանումն է, ինչպես նաև ՀՔՀԱԿ ՀԿ-ի կարմիր դրոշների մեթոդաբանության հիման վրա ռիսկային ընկերությունների ցանկի մշակումն է (տես Հավելված 2):

# Պաշտպանության նախարարություն



## Պաշտպանության բնագավառի բյուջետային ծախսերի ուսումնասիրություն

Համաձայն պետական բյուջեի վերաբերյալ հաշվետվությունների, բյուջետային ծախսերը վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են աճի միտում և դրանց մեջ ներառված պաշտպանական բնագավառի ծախսերը հիմնականում պահպանել են այդ միտումը, բացառությամբ 2018թ. (Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Բյուջետային ծախսերի դինամիկան 2015-2019թթ.** [25]

| | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
|---|---|---|---|---|---|
| Ընդամենը պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ, որից՝ | 1409 | 1449 | 1505 | 1447 | 1648 |
| Ընդամենը պաշտպանության ծախսեր, մլրդ դրամ | **199** | **226** | **294.4** | **238.4** | **313.3** |
| Պաշտպանության ծախսերի մասնաբաժինը, % | 14.1 | 15.6 | 19.6 | 16 | 19 |

2019թ. պաշտպանական բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 313,3 մլրդ դրամ, ինչը կազմում է պետբյուջեի տարեկան ծախսերի շուրջ 19%-ը: Այս ծախսերը

[25] 3 http://minfin.am/

գերազանցում են նախորդ տարվա ցուցանիշը բացարձակ արժեքով մոտ 31%-ով, իսկ պետբյուջեի ծախսերում մասնաբաժնի առումով՝ 3%-ով:

ՊՆ առավել խոշոր ծախսային ուղղությունը ռազմական պաշտպանությանը ուղղված ծախսերն են, որոնք նույնպես տարեց տարի գրանցել են աճի միտում (Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերի բնութագիրը ըստ գործառական դասակարգման** (պաշտպանություն)

| | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
|---|---|---|---|---|---|
| Ռազմական պաշտպանություն | 191.1 | 218 | 286.4 | 229 | 302.2 |
| Արտաքին ռազմական օգնություն | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 |
| Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում | 1.6 | 1.6 | 1.6 | 2.2 | 2.9 |
| Պաշտպանություն (այլ դասերի չպատկանող) | 5.6 | 6.0 | 6.2 | 7.2 | 7.4 |
| **Ընդամենը** | **199** | **226** | **294.4** | **238.4** | **313.3** |

## Պաշտպանության նախարարության գնումները

Համադրելով պաշտոնական աղբյուրների տվյալները, ՊՆ պլանային գնումների դինամիկան 2013-ից 2019թթ համար ներկայացված է Գծապատկեր 1-ում:

**Գծապատկեր 1. ՊՆ պլանային գնումների դինամիկան 2013-2019թթ. (մլրդ դրամ)**



Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերից, վերջին երեք տարվա ընթացքում պլանային գնումները ունեցել են աճի միտում: 2019թ. պլանային գնումները նախորդ տարվա համեմատ աճել են շուրջ 8%-ով՝ կազմելով 46,1 մլրդ դրամ:

Համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքի միջոցով գեներացվող տվյալների[26]՝ 2019թ. տարեկան կտրվածքով ՊՆ կողմից կնքվել է 1046 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 38.8 մլրդ դրամի[27] պարտավորություն: 2018թ. կնքվել է ավելի քիչ՝ 951 պայմանագիր, սակայն արդյունքում գեներացվել է շուրջ 3.7 մլրդ դրամով ավելի շատ՝ 42.5 մլրդ դրամի պարտավորություն (Գծապատկեր 2)[28]:

**Գծապատկեր 2. ՊՆ գնումները եռամսյակային կտրվածքով (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**




Ստորև բերված գծապատկերում և աղյուսակներում ներկայացված են ՊՆ գնումների սեզոնային հակվածությունը և մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորության վերաբերյալ ուսումնասիրության տվյալները:

[26] Տվյալները թարմացվել են 2020թ. մարտի 15-ի դրությամբ և չեն ներառում պետական գաղտնիք պարունակող գնումները:
[27] Այս ցուցանիշը հնարավոր է ամբողջությամբ չարտացոլի ՊՆ իրական գնումների արժեքը, հաշվի առնելով այն փաստը, որ երբեմն պետական անվտանգության նկատառումներով, պաշտպանական բնագավառի տվյալները ներկայացվում են ոչ ամբողջական  և որոշ պայմանագրեր մուտքագրվում են համակարգ որոշակի ժամանակ անց:
[28] https://www.armeps.am/ppcm/public/contracts

**Գծապատկեր 3. ՊՆ գնումների բաշխումն ըստ ամիսների (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**




**Աղյուսակ 3. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների, 2018թ.**

| | Գումարը, մլրդ դրամ | Քանակը, հատ | Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ |
|---|---|---|---|
| I եռամսյակ | 15 | 217 | 68 |
| II եռամսյակ | 18 | 427 | 41 |
| III եռամսյակ | 5 | 213 | 25 |
| IV եռամսյակ | 5 | 94 | 53 |
| **Ընդամենը** | 43 | 950 | 45 |

**Աղյուսակ 4. ՊՆ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների, 2019թ.**

| | Գումարը, մլրդ դրամ | Քանակը, հատ | Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ |
|---|---|---|---|
| I եռամսյակ | 13 | 219 | 59 |
| II եռամսյակ | 8 | 286 | 27 |
| III եռամսյակ | 13 | 389 | 33 |
| IV եռամսյակ | 5 | 152 | 35 |
| **Ընդամենը** | 39 | 1 046 | 37 |

Դիտարկելով մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունները, կարելի է նկատել, որ առաջին եռամսյակում ցուցանիշը

ուսումնասիրված տարիներին բարձր է, որը ընդանուր միջին գեներացված պարտավորություններից առավել է մոտ 1.5-1.6 անգամ (Աղյուսակ 3 և 4): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ հիմնականում առաջին եռամսյակում են կնքվում կոմունալ ոլորտի և այլ խոշոր պայմանագրերը, որոնք ըստ ժամանակացույցի նախատեսում են դրանց հետագա բաշխումը:

ՊՆ գնումների ըստ ուղղությունների բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019թ. նվազել են սննդամթերքի ձեռքբերման ծախսերը, ինչը մասնակիորեն կապված է սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերմամբ: Կարելի է նկատել նաև այն, որ ամենախոշոր հոդված հանդիսացող ուղղությունը՝ վառելիքի ձեռք բերման ծախսը, ավելացել է 3.8 մլրդ դրամով: 2019թ. ՊՆ վառելիքի գնման ծախսը կազմել է 12.3 մլրդ դրամ, որից 4.4 մլրդ դրամը հատկացվել է ավիավեռիլիքի ձեռքբերմանը Մաքս Օիլ ՍՊԸ-ից (Աղյուսակ 5):

**Աղյուսակ 5. ՊՆ ծախսերը բաշխված ըստ ուղղությունների, 2018 և 2019թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| **Գնման ուղղություն** | **մլրդ դրամ** | **մասնաբաժինը, %** | **մլրդ դրամ** | **մասնաբաժինը, %** |
| Վառելիք | 8.5 | 20 | 12.3 | 32 |
| Սննդամթերք | 10 | 31 | 8.2 | 21 |
| Ավտոմեքենաներ, հատուկ մեքենաներ, պահեստամասեր, յուղեր, քսուկներ | 3.4 | 8 | 4 | 10 |
| Էլեկտրականության և գազի բաշխում | 3.5 | 8 | 3.4 | 9 |
| Հանդերձանք | 3.3 | 8 | 2.2 | 6 |
| Շինարարական աշխատանքներ | 0.9 | 2 | 1.2 | 3 |
| Համակարգչային և կապի միջոցներ | 0.5 | 1 | 1.1 | 3 |
| Դեղորայք և բժշկական պարագաներ | 0.8 | 2 | 1.1 | 3 |
| Ներկայացուցչական ծառայություններ | 0.28 | 1 | 0.35 | 0.9 |
| Ջրամատակարարում | 0.7 | 3 | 0.7 | 0.01 |
| Այլ ծախսեր | 10 | 23 | 5 | 12 |
| **Ընդամենը** | **42.5** | **100** | **38.8** | **100** |

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ներկայացուցչական ծառայությունների գնման ուղղությանը, որի վերլուծության արդյունքները ներկայացված են Գծապատկեր 4-ում:

### Գծապատկեր 4. ՊՆ ներկայացուցչական ծախսերի բաշխումն ըստ ուղղությունների, 2018 և 2019թթ. (մլն դրամ)




Ինչպես երևում է գծապատկերում բերված տվյալներից, որոշ ուղղություններով ծախսերը ավելացել են, ինչպես օրինակ՝ պատվիրակությունների ընդունման ժամանակ ֆուրշետների, տրանսպորտի և թարգմանչական ծառայությունների ծախսերը: Ավելացել են նաև հուշանվերների, խորհրդանշական նվերների (այդ թվում՝ ժամացույց, նարդի, շախմատ), մեդալների և կրծքանշանների ձեռքբերմանն ուղղված ծախսերը:

Հարկ է նշել, որ էլեկտրոնային համակարգին անցումը ենթադրում է թղթային և տպագրական ծախսերի կրճատում, այսպիսով մեր կողմից փորձ է կատարվել հասկանալու արդյոք էլեկտրոնային հարթակին անցումը ֆինանսապես արդարացված է:

### Գծապատկեր 5. ՊՆ թղթի և տպագրման ծախսերի փոփոխությունը, 2017-2019թթ. (մլն դրամ)




Այսպիսով, թղթի ծախսը 2017թ-ի համեմատ 2019թ. էականորեն ավելացել է՝ 4 մլն դրամից հասնելով 70 մլն դրամի, իսկ տպագրական աշխատանքներին ուղղված

ծախսերը, որոնք 2017թ. կազմել էին 45 մլն դրամ, 2019թ-ին եռապատկվել են, կազմելով՝ 136 մլն դրամ:

Ելնելով ՊՆ ծախսերի բաշխվածությունից, կարելի է եզրակացնել, որ էլեկտրոնային համակարգին անցումը չի ծառայել իր ֆինանսական արդյունավետության նպատակին, քանի որ տպագրության և թղթի ձեռքբերման ծախսերը նվազելու փոխարեն նշանակալիորեն ավելացել են:

ՊՆ գնումների արժեքային և քանակական վերլուծությունն ըստ ընթացակագերի ներկայացված է Աղյուսակ 6-ում:

**Աղյուսակ 6. ՊՆ գնումները ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | **Կնքված պայմանագրերի քանակը** | **Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ** | **Կնքված պայմանագրերի քանակը** | **Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ** |
| Բաց մրցույթ | 207 | 21.1 | 74 | 5.2 |
| Հրատապ բաց մրցույթ | 61 | 8.1 | 32 | 12.9 |
| Էլ. աճուրդ | 37 | 1.8 | 196 | 8.9 |
| Գնանշման հարցում | 580 | 5.5 | 593 | 5.1 |
| **Մեկ անձ** | **62** | **6.1** | **82** | **4.4** |
| **Հրատապ մեկ անձ** | **2** | **0.02** | **69** | **2.3** |
| Գնում չհանդիս. ծախս | 2 | 0.004 | - | - |
| **Ընդհանուր** | **951** | **42.5** | **1046** | **38.8** |

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ նախորդ ժամանակահատվածի համեմատ **և՛ քանակական, և՛ արժեքային առումով դիտարկվում է ոչ մրցակցային (մեկ անձ և հրատապ մեկ անձ) գնումների աճ:** Մասնավորապես, նախորդ տարվա համեմատ 2019թ. ոչ մրցակցային ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերը քանակապես ավելացել են շուրջ 1.7 անգամ՝ կազմելով 106 պայմանագիր նախորդ ժամանակաշրջանի 64-ի համեմատ, իսկ արժեքային առումով շուրջ 0.6 մլրդ դրամով՝ կազմելով 6.7 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 6.1 մլրդ դրամի համեմատ:

Ի դեպ, ոչ մրցակցային գնումների աճը հիմնականում պայմանավորված է հրատապ մեկ անձից գնման ձևի կիրառության ավելացմամբ, քանի որ չնայած 2019թ. մեկ անձից գնման ձևը քանակապես ավելացել է, սակայն արժեքային առումով նկատվել է շուրջ 1.7 մլրդ դրամի նվազում (2018թ. 6.1 մլրդ դրամից՝ 2019թ. 4.4 մլրդ դրամ): Դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ այս գնումների գերակշիռ մասը կազմել են էլեկտրական էներգիայի մատակարարման

ծառայությունների ձեռքբերման, գազի բաշխման, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերման ծախսերը (2018թ.՝ 4.9 մլրդ դրամ, 2019թ.՝ 3.5 մլրդ դրամ): Հարկ է նշել, սակայն, որ 2019թ. համար ARMEPS համակարգում առկա  չէ Վեոլիա ջուր ՓԲԸ-ի հետ պայմանագիրը, մինչդեռ 2018թ. ՊՆ այս ընկերության հետ կնքել էր շուրջ 1.4 մլրդ դրամի 2 պայմանագիր՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերման նպատակով: ՀՀ էլեկտրոնային կառավարման e-gov.am կայքի մեկ անձից կատարվող գնումների բաժնում 2019թ. համար այս ընկերության հետ հրապարակված է 700.946.000 դրամի միայն մեկ պայմանագիր՝ ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

Հրատապ մեկ անձից գնման ձևի դեպքում նախորդ տարվա 16.4 մլն դրամի 2 պայմանագրի համեմատ այս տարի կնքվել է շուրջ 2.3 մլրդ դրամի 69 պայմանագիր: Հրատապության հիմքով գնումների խոշորագույն ծախսային ուղղություններից են հանդիսացել վառելիքի, սննդամթերքի, բժշկական գործիքների, պարագաների, ծախսվող նյութերի և դեղորայքի, հագուստի, շարժական շենքերի, շինանյութերի և ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերումները:

ՊՆ կնքած պայմանագրերի քանակային և արժեքային կառուցվածքն ըստ գնման ընթացակարգերի ներկայացված է Գծապատկեր 6-ում և 7-ում:

**Գծապատկեր 6. ՊՆ կնքած պայմանագրերի քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

<table>
<tr><th>Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ.</th><th>Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ.</th></tr>
<tr><td>


</td><td>


</td></tr>
</table>

**Գծապատկեր 7. ՊՆ կնքած պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ. | Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ. |
|---|---|
|   |   |

Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերներում բերված տվյալներից, դիտարկվող ժամանակահատվածում և՛ քանակական, և՛ արժեքային առումով ՊՆ գնումներում մեծացել է ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը: Մասնավորապես, **2019թ. ոչ մրցակցային գնումների մասնաբաժինն ընդհանուր ՊՆ գնումներում քանակային առումով ավելացել է շուրջ 3.2%-ով՝ կազմելով մոտ 10.4% նախորդ 7.2%-ի համեմատ, իսկ արժեքային առումով՝ 3%-ով՝ կազմելով 17% նախկին 14%-ի համեմատ:**

ՊՆ ոչ մրցակցային գնումների վերլուծությունը եռամսյակային կտրվածքով ներկայացված է Գծապատկեր 8-ում:

**Գծապատկեր 8. ՊՆ ոչ մրցակցային գնումները եռամսյակային կտրվածքով (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**



Համաձայն գնումների հաշվետվողականության կայքի տվյալների, 2019թ. ՊՆ գնումներում հաղթող են ճանաչվել 403 ընկերություններ, ինչը մի փոքր ավել է նախորդ տարվա ցուցանիշից (379 ընկերություն):

Պետք է նշել, որ դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ խոշորագույն 10 մատակարարները գումարային առումով վերահսկել են ՊՆ գնումների կեսից ավելին: Այսինքն, **ՊՆ գնումներում առկա է մատակարարների բարձր կենտրոնացվածություն:** Մասնավորապես, 2018թ. խոշորագույն 10 մատակարարները վերահսկել են ՊՆ գնումների 53%-ը (առանց բնական մենաշնորհների՝ 42%), իսկ 2019թ. այս ցուցանիշը ավելացել է՝ կազմելով 56% (առանց բնական մենաշնորհների՝ 47%) (Աղյուսակ 7):

**Աղյուսակ 7. ՊՆ խոշորագույն մատակարարները, 2018 և 2019թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | | **Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ** | | **Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ** |
| **1** | Ֆլեշ ՍՊԸ | 7.2 | Մաքս Օիլ ՍՊԸ | 5.9 |
| **2** | Ավանգարդ ՍՊԸ | 2.9 | Ֆլեշ ՍՊԸ | 3.9 |
| **3** | Էլիտ Կապիտալ ՍՊԸ | 2.5 | Գազօիլ ՍՊԸ | 2.4 |
| **4** | ՀԷՑ ՓԲԸ | 2.1 | ՀԷՑ ՓԲԸ | 2.1 |
| **5** | Էրիզ ՍՊԸ | 1.8 | Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ ՍՊԸ | 1.6 |
| **6** | Վեոլիա ջուր | 1.4 | Գազպրոմ Արմենիա ՓԲԸ | 1.4 |
| **7** | Գազպրոմ Արմենիա ՓԲԸ | 1.4 | Էրիզ ՍՊԸ | 1.3 |
| **8** | Աքվատիկ ՍՊԸ | 1.2 | Համլետ Հովսեփյան ԱՁ | 1.2 |
| **9** | Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ ՍՊԸ | 1.1 | Աքվատիկ ՍՊԸ | 1.2 |
| **10** | Արպանիվ ՍՊԸ | 1 | Արպանիվ ՍՊԸ | 0.8 |
| | **Ընդամենը 10 խոշոր մատակարարներ** | **22.6** | | **21.8** |
| | ՊՆ ընդհանուր գնումներ | 42.5 | | 38.8 |
| | **10 խոշոր մատակարարների մասնաբաժինը ՊՆ ընդհ. գնումներում** | **53%** | | **56%** |

Ինչպես երևում է աղյուսակից, նախորդ տարվա համեմատ 2019թ. խոշորագույն 10 մատակարարների անվանացանկը էական փոփոխություններ չի կրել, սակայն որոշ մատակարարների հետ կնքված պայմանագրային արժեքը նվազել է և ցանկը համալրվել է նոր մատակարարներով:

Առավել հետաքրքրական է խոշորագույն մատակարարների պայմանագրային պորտֆելների ուսումնասիրությունը (Աղյուսակ 8 և 9):

**Աղյուսակ 8. ՊՆ խոշորագույն մատակարարների բնութագիրը, 2018թ.**

| | | ՊՆ հետ կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | ՊՆ հետ կնքված պայմանագրեր ի քանակը, հատ | Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ | Մատակարարի ընդհ. պորտֆելում ՊՆ գնումների կշիռը, % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Ֆլեշ ՍՊԸ** | 7.2 | 4 | 8.8 | 124 | 82 |
| 2 | **Ավանգարդ ՍՊԸ** | 2.95 | 14 | 2.98 | 16 | 99 |
| 3 | **Էլիտ Կապիտալ ՍՊԸ** | 2.5 | 8 | 2.5 | 8 | 100 |
| 4 | **ՀԷՑ ՓԲԸ** | 2.1 | 1 | 8.6 | 144 | 24 |
| 5 | **Էրիզ ՍՊԸ** | 1.8 | 12 | 1.8 | 12 | 100 |
| 6 | **Վեոլիա ջուր** | 1.4 | 2 | 1.5 | 33 | 93 |
| 7 | **Գազպրոմ Արմենիա ՓԲԸ** | 1.4 | 1 | 1.6 | 32 | 88 |
| 8 | **Աքվատիկ ՍՊԸ** | 1.2 | 2 | 1.2 | 2 | 100 |
| 9 | **Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ ՍՊԸ** | 1.1 | 8 | 1.1 | 8 | 100 |
| 10 | **Արպանիվ ՍՊԸ** | 1 | 2 | 1.1 | 46 | 91 |

**Աղյուսակ 9. ՊՆ խոշորագույն մատակարարների բնութագիրը, 2019թ.**

| | | ՊՆ հետ կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | ՊՆ հետ կնքված պայմանագրերի քանակը, հատ | Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ | Մատակարարի ընդհ. պորտֆելում ՊՆ գնումների կշիռը, % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Մաքս Օիլ ՍՊԸ** | 5.9 | 6 | 6.7 | 80 | 88 |
| 2 | **Ֆլեշ ՍՊԸ** | 3.9 | 3 | 5.3 | 99 | 75 |
| 3 | **Գազօիլ ՍՊԸ** | 2.4 | 1 | 2.4 | 1 | 100 |
| 4 | **ՀԷՑ ՓԲԸ** | 2.1 | 1 | 2.4 | 68 | 88 |
| 5 | **Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ ՍՊԸ** | 1.57 | 3 | 1.59 | 4 | 99 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | **Գազպրոմ Արմենիա ՓԲԸ** | 1.4 | 2 | 1.5 | 52 | 93 |
| 7 | **Էրիզ ՍՊԸ** | 1.3 | 11 | 1.3 | 11 | 100 |
| 8 | **Ա/Ձ Համլետ Հովսեփյան** | 1.19 | 2 | 1.2 | 3 | 99 |
| 9 | **Աքվատիկ ՍՊԸ** | 1.2 | 1 | 1.2 | 1 | 100 |
| 10 | **Արպանիվ** | 0.8 | 5 | 1 | 54 | 87 |

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակների տվյալներից, մատակարարներից որոշների պորտֆելում ՊՆ գնումների կշիռը բավական մեծ է, իսկ որոշների համար ՊՆ-ը հանդիսանում է միակ պատվիրատուն և փաստորեն պետգնումների շրջանակում այս ընկերությունների ձևավորած պորտֆելը լիովին կախված է ՊՆ գնումներից (Էլիտ Կապիտալ ՍՊԸ, Էրիզ ՍՊԸ, Աքվատիկ ՍՊԸ, Գազօիլ ՍՊԸ), մինչդեռ նրանց կողմից մատակարարված ապրանքները չեն կարող համարվել այս ոլորտի համար յուրահատուկ: Սա կարող է պայմանավորված լինել կա՛մ այն հանգամանքով, որ այդ ընկերությունները մասնակցում են միայն ՊՆ կողմից կազմակերպված ընթացակարգերին, կա՛մ, որ մասնակցելով այլ ընթացակարգերի, հաղթող են ճանաչվում միայն ՊՆ գնումներում:

Այստեղ հետաքրքրական է նաև պետգնումներում վառելիք մատակարարող նոր ընկերության՝ Գազօիլ ՍՊԸ-ի ի հայտ գալը, որը մատակարարել է ամառային վառելիք:

## Ոստիկանություն

Համաձայն պաշտոնական աղբյուրների տվյալների, Ոստիկանության պլանային գնումների դինամիկան 2009-ից 2019թթ. համար ներկայացված է Գծապատկեր 9-ում:

**Գծապատկեր 9. Ոստիկանության պլանային գնումների դինամիկան, 2009-2019թթ. /մլրդ դրամ/**




Ինչպես երևում է վերոնշյալ գծապատկերից, 2019թ. Ոստիկանության պլանային գնումները գրանցել են կտրուկ աճ, սակայն հարկ է նշել, որ սա կապված է արտաբյուջետային միջոցների հաշվառման հետ[29]:

[29] Պետք է նշել, որ 2018թ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը: http://www.minfin.am/website/images/files/October.doc /

Համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքի միջոցով գեներացվող տվյալների[30]՝ 2019թ. տարեկան կտրվածքով Ոստիկանության կողմից կնքվել է 882 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 13.2 մլրդ դրամի պարտավորություն: 2018թ. կնքվել է ավելի քիչ՝ 785 պայմանագիր, սակայն արդյունքում գեներացվել է շուրջ 3.1 մլրդ դրամով ավելի շատ՝ 16.3 մլրդ դրամի պարտավորություն (Գծապատկեր 10):

**Գծապատկեր 10. Ոստիկանության գնումները եռամսյակային կտրվածքով (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**




Գծապատկեր 11-ում և ստորև բերված աղյուսակներում ներկայացված են Ոստիկանության գնումների սեզոնային հակվածությունը և մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորության վերաբերյալ ուսումնասիրության տվյալները:

**Գծապատկեր 11. Ոստիկանության գնումների բաշխումն ըստ ամիսների (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**




[30] Տվյալները թարմացվել են 2020թ. մարտի 15-ի դրությամբ:

**Աղյուսակ 10. Ոստիկանության գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների, 2018թ.**

| | Գումարը, մլրդ դրամ | Քանակը, հատ | Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ |
|---|---|---|---|
| I եռամսյակ | 3.7 | 129 | 29 |
| II եռամսյակ | 5 | 245 | 20 |
| III եռամսյակ | 1.5 | 214 | 1 |
| IV եռամսյակ | 6 | 191 | 29 |
| **Ընդամենը** | 16.2 | 779 | 20 |

**Աղյուսակ 11. Ոստիկանության գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների, 2019թ.**

| | Գումարը, մլրդ դրամ | Քանակը, հատ | Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ |
|---|---|---|---|
| I եռամսյակ | 5.1 | 132 | 39 |
| II եռամսյակ | 2.9 | 356 | 8 |
| III եռամսյակ | 2.9 | 195 | 15 |
| IV եռամսյակ | 2.1 | 199 | 11 |
| **Ընդամենը** | 13.2 | 882 | 15 |

Ինչպես երևում է աղյուսակներից, ի տարբերություն նախորդ տարվա, 2019թ. առաջին եռամսյակում մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորության ցուցանիշը էական տարբերվում է մյուս եռամսյակների նմանատիպ ցուցանիշներից, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ժամանակաշրջանում են կնքվել կոմունալ ոլորտի, ինչպես նաև հավատարմագրային կառավարման և վճարովի պահպանության ծառայությունների ձեռքբերման խոշոր պայմանագրերը:

Ոստիկանության գնումների ըստ ուղղությունների բաշխվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019թ. նախորդ տարվա համեմատ ավելացել են հավատարմագրային ծառայությունների և տրանսպորտային միջոցների հաշվառման պետհամարանիշների ձեռքբերման ծախսերը, իսկ մյուս գնման ուղղություններով գրանցվել է նվազման միտում (Աղյուսակ 12):

**Աղյուսակ 12. Ոստիկանության ծախսերը բաշխված ըստ ուղղությունների, 2018 և 2019թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| Գնման ուղղություն | մլրդ դրամ | մասնաբաժինը, % | մլրդ դրամ | մասնաբաժինը, % |
| Հավատարմագրային ծառայություններ | 3.3 | 20 | 3.9 | 24 |
| Վառելիք | 2.9 | 18 | 2.4 | 18 |
| Հաշվառման համարանիշներ | 0.4 | 2 | 1.4 | 10 |
| Անձնագրեր, վարորդական վկայականներ, պլաստիկ քարտեր | 0.9 | 6 | 0.7 | 5 |
| Համդերձանք | 1.4 | 9 | 0.7 | 5 |
| Ավտոմեքենաների հետ կապված ծախսեր | 1.2 | 7 | 0.7 | 5 |
| Ներկայացուցչական ծառայություններ | 0.1 | 1 | 0.08 | 1 |
| Այլ ծախսեր | 6.1 | 38 | 3.32 | 33 |
| **Ընդամենը** | **16.3** | **100** | **13.2** | **100** |

Ներկայացուցչական ծառայությունների ձեռքբերմանն ուղղված ծախսերի ուսումնասիրությունը վկայում է, որ 2019թ. նախորդ տարվա համեմատ այս ծախսերը մի փոքր նվազել են մեծամասամբ մեդալների և կրծքանշանների գնման ծավալների նվազման հաշվին: Այս գնումներում մեծ մասնաբաժին են կազմել երեխաների համար խաղերի կազմակերպման և խաղալիքների ձեռքբերման ծախսերը: 2019թ. ավելացել են ճաշկերույթների և ֆուրշետների կազմակերպման (շուրջ 9.6մլն դրամով) և կոնյակի ձեռքբերման ծախսերը (7.7 մլն դրամով) (Գծապատկեր 12):

**Գծապատկեր 12. Ոստիկանության ներկայացուցչական ծախսերի բաշխումն ըստ ուղղությունների, 2018 և 2019թթ. (մլն դրամ)**



Ինչպես արդեն նշվել էր, էլեկտրոնային համակարգին անցումը ենթադրում է թղթային և տպագրական ծախսերի կրճատում, այսպիսով մեր կողմից փորձ է կատարվել հասկանալու, թե արդյոք այս կառույցի դեպքում էլ էլեկտրոնային հարթակին անցումը ֆինանսապես արդարացված է, թե ոչ (Գծապատկեր 13):

**Գծապատկեր 13. Ոստիկանության թղթի և տպագրման ծախսերի փոփոխությունը, 2017-2019թթ. (մլն դրամ)**




Ինչպես երևում է գծապատկերից, երկու հոդվածներով՝ թղթի և տպագրման ծառայությունների ձեռքբերման առումով 2019թ. գրանցվել է ծախսային աճ, ինչը կրկին որոշակի կասկածի տակ է դնում ֆինանսական առումով էլեկտրոնային համակարգի արդյունավետ անցման դրույթը:

Ոստիկանության գնումների արժեքային և քանակական վերլուծությունն ըստ ընթացակագերի ներկայացված է Աղյուսակ 13-ում:

**Աղյուսակ 13. Ոստիկանության գնումները ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | Կնքված պայմանագրերի քանակը | Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ | Կնքված պայմանագրերի քանակը | Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ |
| Բաց մրցույթ | 11 | 1.6 | 4 | 0.5 |
| Հրատապ բաց մրցույթ | 22 | 4.9 | 27 | 3.7 |
| Էլ. աճուրդ | 31 | 0.3 | 43 | 1 |
| Գնանշման հարցում | 511 | 2.8 | 513 | 2.4 |
| **Մեկ անձ** | **119** | **6.6** | **143** | **5.4** |
| **Հրատապ մեկ անձ** | **1** | **0.02** | **4** | **0.1** |
| Գնում չհանդիս. ծախս | 90 | 0.03 | 151 | 0.1 |
| **Ընդհանուր** | **785** | **16.25** | **885** | **13.2** |

Վերոնշյալ աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ չնայած նախորդ ժամանակահատվածի համեմատ **ոչ մրցակցային գնումները քանակապես ավելացել են, սակայն արժեքային առումով դիտարկվել է այս գնումների նվազում:** Մասնավորապես, եթե 2018թ. ոչ մրցակցային եղանակով կնքվել էր 120 պայմանագիր գեներացնելով շուրջ 6.6 մլրդ դրամի պարտավորություն, ապա 2019թ. կնքվել է մոտ 27-ով ավել պայմանագիր (147), սակայն շուրջ 1.1 մլրդ դրամով պակաս պարտավորությամբ (5.5 մլրդ դրամ):

Դիտարկվող ժամանակաշրջաններում այս գնումների գերակշիռ մասը կազմել են հավատարմագրային կառավարման ծառայությունների (Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ), փոստային առաքման ծառայությունների և էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերման ծախսերը: Հարկ է նշել, սակայն, որ 2019թ. համար ARMEPS համակարգում հրապարակված է ՀԷՑ ՓԲԸ-ի հետ կնքված միայն 2 պայմանագիր՝ 200.800 դրամի, մինչդեռ 2018թ. համար կայքում առկա է այս ընկերության հետ կնքված 18 պայմանագիր՝ շուրջ 1.8 մլրդ դրամի:

Ոստիկանության կնքած պայմանագրերի քանակային և արժեքային կառուցվածքն ըստ գնման ընթացակարգերի ներկայացված է Գծապատկեր 14-ում և 15-ում:

**Գծապատկեր 14. Ոստիկանության կնքած պայմանագրերի քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| **Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ.** | **Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ.** |
|---|---|
|  |  |

**Գծապատկեր 15. Ոստիկանության կնքած պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ. | Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ. |
|---|---|
|   |   |

Ինչպես երևում է Գծապատկեր 14-ում և 15-ում բերված տվյալներից, դիտարկվող ժամանակահատվածում **քանակական և արժեքային առումով ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը Ոստիկանության գնումներում փոքր ինչ մեծացել է:** Մասնավորապես, 2019թ. ոչ մրցակցային գնումների մասնաբաժինն ընդհանուր Ոստիկանության գնումներում քանակային առումով ավելացել է շուրջ 1.4%-ով՝ կազմելով մոտ 16.5% նախորդ 15.1%-ի համեմատ, իսկ արժեքային առումով՝ 0.7%-ով՝ կազմելով 41.8% նախկին 41.1%-ի համեմատ:

Ինչպես արդեն նշվել էր, այս ոչ մրցակցային գնումների 80-95%-ը պայմանավորված է բացառիկ իրավունքի կամ բնական մենաշնորհների առկայությամբ:

Ոստիկանության ոչ մրցակցային գնումների վերլուծությունը եռամսյակային կտրվածքով ներկայացված է Գծապատկեր 16-ում:

**Գծապատկեր 16. Ոստիկանության ոչ մրցակցային գնումները եռամսյակային կտրվածքով (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**



Համաձայն գնումների հաշվետվողականության կայքի տվյալների, 2019թ. Ոստիկանության գնումներում հաղթող են ճանաչվել 337 ընկերություններ, ինչը մի փոքր ավել է նախորդ տարվա ցուցանիշից (305 ընկերություն):

Հարկ է նշել, որ դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ Ոստիկանության գնումներում առկա է մատակարարների բարձր կենտրոնացվածություն, քանի որ խոշորագույն 10 մատակարարները գումարային առումով վերահսկում են Ոստիկանության գնումների գերակշիռ մասը: Սակայն այս առումով 2019թ. դիտարկվել է դրական միտում: Մասնավորապես, 2018թ. խոշորագույն 10 մատակարարները վերահսկել են Ոստիկանության գնումների 76%-ը (առանց բացառիկ իրավունքի կամ բնական մենաշնորհների՝ 39%), իսկ 2019թ. այս ցուցանիշը նվազել է՝ կազմելով 69% (առանց բացառիկ իրավունքի կամ բնական մենաշնորհների՝ 35%) (Աղյուսակ 14):

**Աղյուսակ 14. Ոստիկանության խոշորագույն մատակարարները, 2018 և 2019թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | | **Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ** | | **Կնքված պայմանագրերի արժեքը, մլրդ դրամ** |
| **1** | Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ | 3.3 | Սեքյուրիթի դրիմ ՍՊԸ | 3.9 |
| **2** | Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ | 2.1 | ՍիՓիԷս Օիլ/ Քորփորեյշն ՍՊԸ | 1.3 |
| **3** | ՀԷՑ ՓԲԸ | 1.8 | Բիլլ Սթոուն ՍՊԸ | 0.92 |
| **4** | Ուկռինվեստ ՍՊԸ | 1.4 | Ֆլեշ ՍՊԸ | 0.89 |
| **5** | Հայփոստ ՓԲԸ | 0.96 | Հայփոստ | 0.57 |
| **6** | Ֆլեշ ՍՊԸ | 0.85 | Ջնակ Ստանդարտ | 0.39 |
| **7** | Էյ Էմ Փի Ջի գրուպ ՍՊԸ | 0.53 | Էյ Էմ Փի Ջի Գրուպ ՍՊԸ | 0.35 |
| **8** | Տոյոտա Երևան ՍՊԸ | 0.49 | ООО Социос | 0.26 |
| **9** | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | 0.47 | Տոյոտա Երևան ՍՊԸ | 0.25 |
| **10** | Polska Wytwornia Papierow Wartosciowych S.A. | 0.46 | Դորս Քոմպյուտերս ՍՊԸ | 0.25 |
| | **Ընդամենը 10 խոշոր մատակարարներ** | **12.36** | | **9.08** |
| | Ոստիկանության ընդհանուր գնումներ | 16.3 | | 13.2 |
| | **10 խոշոր մատակարարների մասնաբաժինը Ոստիկանության ընդհ. գնումներում** | **76 %** | | **69 %** |

Ինչպես երևում է աղյուսակից, նախորդ տարվա համեմատ 2019թ. խոշորագույն 10 մատակարարների անվանացանկը էական փոփոխություններ չի կրել, սակայն նախկինում ցանկի մեջ ընդգրկված որոշ մատակարարների հետ կնքված պայմանագրային արժեքը նվազել է (բացի Սեքյուրիթի դրիմ ՍՊԸ-ից և Ֆլեշ ՍՊԸ-ից) և ցանկը համալրվել է նոր մատակարարներով:

Առավել հետաքրքրական է խոշորագույն մատակարարների պայմանագրային պորտֆելների ուսումնասիրությունը (Աղյուսակ 15 և 16):

**Աղյուսակ 15. Ոստիկանության խոշորագույն մատակարարների բնութագիրը, 2018թ.**

| | | Ոստիկան. հետ կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | Ոստիկան. հետ կնքված պայմանագրերի քանակը, հատ | Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ | Մատակարարի ընդհ. պորտֆելում Ոստիկանության գնումների կշիռը, % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ | 3.3 | 1 | 3.3 | 1 | 100 |
| 2 | Սիփիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ | 2.1 | 11 | 4.5 | 173 | 47 |
| 3 | ՀԷՑ ՓԲԸ | 1.8 | 18 | 8.6 | 144 | 21 |
| 4 | Ուկռինվեստ ՍՊԸ | 1.4 | 6 | 1.4 | 6 | 100 |
| 5 | Հայփոստ ՓԲԸ | 0.96 | 13 | 2.4 | 109 | 40 |
| 6 | Ֆլեշ ՍՊԸ | 0.85 | 6 | 8.8 | 124 | 10 |
| 7 | Էյ Էմ Փի Ջի գրուպ ՍՊԸ | 0.53 | 1 | 2.4 | 5 | 22 |
| 8 | Տոյոտա Երևան ՍՊԸ | 0.49 | 5 | 0.66 | 43 | 74 |
| 9 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | 0.47 | 5 | 1.1 | 21 | 43 |
| 10 | Polska Wytwornia Papierow Wartosciowych S.A. | 0.46 | 2 | 0.46 | 2 | 100 |

**Աղյուսակ 16. Ոստիկանության խոշորագույն մատակարարների բնութագիրը, 2019թ.**

| | | Ոստիկան. հետ կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | Ոստիկան. հետ կնքված պայմանագր. քանակը, հատ | Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ | Մատակարարի ընդհ. պորտֆելում Ոստիկան. գնումների կշիռը, % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ | 3.9 | 2 | 3.9 | 2 | 100 |
| 2 | ՍիՓիԷս Օիլ ՍՊԸ | 1.3 | 16 | 3.5 | 128 | 38 |
| 3 | Բիլլ Սթոուն ՍՊԸ | 0.916 | 7 | 0.918 | 9 | 99 |
| 4 | Ֆլեշ ՍՊԸ | 0.9 | 9 | 5.3 | 101 | 17 |
| 5 | Հայփոստ | 0.6 | 9 | 1.3 | 102 | 44 |
| 6 | Զնակ Ստանդարտ | 0.4 | 4 | 0.4 | 4 | 100 |
| 7 | Էյ Էմ Փի Ջի Գրուպ ՍՊԸ | 0.4 | 2 | 6.8 | 14 | 5 |
| 8 | OOO Социос | 0.3 | 3 | 0.3 | 3 | 100 |
| 9 | Տոյոտա Երևան ՍՊԸ | 0.3 | 4 | 0.5 | 31 | 46 |
| 10 | Դոքս Քոմպյուտեր ՍՊԸ | 0.2 | 1 | 0.3 | 7 | 96 |

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակների տվյալներից, մատակարարներից որոշների պորտֆելում Ոստիկանության գնումների կշիռը բավական մեծ է և որոշ դեպքերում Ոստիկանությունը հանդիսանում է այս ընկերությունների համար միակ պատվիրատուն (Սեքյուրիթի Դրիմ ՍՊԸ, Ուկռինվեստ ՍՊԸ, Polska Wytwornia Papierow Wartosciowych S.A., Զնակ Ստանդարտ ՍՊԸ, OOO Социос)։ Սակայն, ի տարբերություն ՊՆ գնումների, այս մատակարարներից մեծ մասի մատուցած ծառայությունները և կատարած աշխատանքները փոքր-ինչ յուրահատուկ են այս ոլորտի համար, մասնավորապես պետհամարանիշերի և նույնականացման քարտերի պատրաստման աշխատանքների, ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների ձեռքբերումը, որոնցով էլ կարող է պայմանավորված լինել պետգնումների շրջանակում այս ընկերությունների ճնշող մասի կախվածությունը Ոստիկանության գնումներից։ Այնուամենայնիվ, 2019թ. ոչ մրցակցային ընթացակարգերով 474.846.150 դրամի

չորս պայմանագիրը Բիլլ Սթոուն ՍՊԸ-ի հետ և 48.397.500 դրամի երկու պայմանագիրը Զնակ Ստանդարտ ՍՊԸ-ի հետ պետհամարանիշների պատրաստման աշխատանքների ծեռքբերման նպատակով որոշակի ռիսկեր են պարունակում, քանզի այսպիսի գնումները սովորաբար իրականացվում են մրցակցային ընթացակարգերով: Ի դեպ, համաձայն e-register.am կայքի տվյալների, վերջին ընկերությունը գրանցվել է 2019թ. փետրվարի 22-ին Ռուսաստանի քաղաքացիություն ունեցող անձի կողմից[31] և ՀՀ պետգնումների ոլորտում առաջին պայմանագիրը կնքվել է 2019թ. մայիսի 1-ին (հրատապ բաց մրցույթի ընթացակարգով): Հարկ է նշել, որ պետհամարանիշների պատրաստման շուկան բավական կենտրոնացած է ՀՀ-ում և վերջին երեք տարվա ընթացքում պետգնումների շրջանակներում միայն չորս ընկերության հետ է պայմանագրեր կնքվել, որոնցից գերակշիռ դիրք է ունեցել Բիլլ Սթոուն ՍՊԸ-ն և միայն 2019թ. այս մասնաբաժինը որոշակիորեն նվազել է ի հաշիվ այլ խաղացողների ի հայտ գալուն:

[31] https://www.e-register.am/am/companies/1237314

# Երևանի քաղաքապետարան



Համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքի միջոցով գեներացվող տվյալների[32]՝ 2019թ. տարեկան կտրվածքով Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից կնքվել է 691 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 4.7 մլրդ դրամի պարտավորություն: Այս ցուցանիշը մոտ 2 անգամ զիջում է նախորդ տարվա ցուցանիշը, որով կնքվել էր 899 պայմանագիր՝ 10.5 մլրդ դրամ պարտավորությամբ (Գծապատկեր 17):

**Գծապատկեր 17. ԵՔ գնումները եռամսյակային կտրվածքով (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**




Գծապատկեր 18-ում և ստորև բերված աղյուսակներում ներկայացված են ԵՔ գնումների սեզոնային հակվածությունը և մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորության վերաբերյալ ուսումնասիրության տվյալները:

[32] Տվյալները թարմացվել են 2020թ. մարտի 15-ի դրությամբ:

**Գծապատկեր 18. ԵՔ գնումների բաշխումն ըստ ամիսների (մլրդ դրամ), 2018 և 2019թթ.**




**Աղյուսակ 17. ԵՔ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների, 2018թ.**

| | Գումարը, մլրդ դրամ | Քանակը, հատ | Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ |
|---|---|---|---|
| I եռամսյակ | 4.3 | 469 | 9.2 |
| II եռամսյակ | 5.1 | 258 | 19.7 |
| III եռամսյակ | 0.2 | 55 | 4 |
| IV եռամսյակ | 0.9 | 117 | 8 |
| **Ընդամենը** | 10.5 | 899 | 11.7 |

**Աղյուսակ 18. ԵՔ գնումների ուսումնասիրությունն ըստ եռամսյակների, 2019թ.**

| | Գումարը, մլրդ դրամ | Քանակը, հատ | Մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորությունը, մլն դրամ |
|---|---|---|---|
| I եռամսյակ | 0.6 | 64 | 9.4 |
| II եռամսյակ | 1.3 | 352 | 4 |
| III եռամսյակ | 2 | 210 | 9.6 |
| IV եռամսյակ | 0.7 | 65 | 10.8 |
| **Ընդամենը** | 4.7 | 691 | 6.8 |

Վերոնշյալ աղյուսակներում բերված տվյալներից երևում է, որ ի տարբերություն նախորդ տարվա, 2019թ. բացառությամբ երկրորդ եռամսյակի տվյալների, մյուս եռամսյակներում մեկ պայմանագրով գեներացված միջին պարտավորության ցուցանիշը էականորեն չի տարբերվում: Իսկ 2018թ. երկրորդ եռամսյակի այս ցուցանիշի բավական բարձր արժեքը պայմանավորված է այդ ժամանակահատվածում ԵՔ-ի կողմից առավել խոշոր պայմանագրերի կնքմամբ, որոնք հիմնականում մրցակցային եղանակով են իրականացվել:

ԵՔ գնումների բաշխվածությունը ըստ ուղղությունների ներկայացված է Աղյուսակ 19-ում:

**Աղյուսակ 19. ԵՔ ծախսերը բաշխված ըստ ուղղությունների, 2018 և 2019թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| **Գնման ուղղություն** | **մլրդ դրամ** | **մասնաբաժինը, %** | **մլրդ դրամ** | **մասնաբաժինը, %** |
| Բարեկարգման և կառուցման շինարարական աշխատանքներ | 2 | 19 | 1.1 | 22 |
| Ներկայացուցչական ծառայություններ | 0.9 | 8 | 0.5 | 12 |
| Ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման | 3.3 | 31 | 0.5 | 11 |
| Հատուկ նշանակության մեքենաներ | 0.4 | 4 | 0.5 | 10 |
| Ջրային կառույցների շահագործում | - | - | 0.3 | 7 |
| Խաղահրապարակների հիմնանորոգում | 0.2 | 2 | 0.3 | 6 |
| Վերելակների վերանորոգում | 0.1 | 1 | 0.2 | 5 |
| Կանաչապատ տարածքների խնամք | 1.6 | 15 | 0.2 | 5 |
| Շենքերի մուտքերի վերանորոգում | 0.4 | 4 | 0.2 | 5 |
| Այլ ծախսեր | 1.6 | 15 | 0.8 | 17 |
| **Ընդամենը** | **10.5** | **100** | **4.7** | **100** |

Համաձայն վերոնշյալ տվյալների, նախորդ տարվա համեմատ 2019թ. ավելացել են հատուկ նշանակության մեքենաների ձեռքբերման, ջրային կառույցների շահագործման, խաղահրապարակների հիմնանորոգման և վերելակների վերանորոգման ծախսերը: Իսկ մնացած գնման ուղղությունների մասով գրանցվել է նվազման միտում:

Ներկայացուցչական ծառայությունների ձեռքբերմանն ուղղված գնումների ուսումնասիրությունը վկայում է, որ 2019թ. նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են շուրջ 0.4 մլրդ դրամով: Այս գնումներում մեծ մասնաբաժին են կազմել տարբեր միջոցառումների կազմակերպման համար կատարված ծախսերը (Գծապատկեր 19):

**Գծապատկեր 19. ԵՔ ներկայացուցչական ծախսերի բաշխումն ըստ ուղղությունների, 2018 և 2019թթ. (մլն դրամ)**




Ինչպես երևում է գծապատկերում ներկայացված տվյալներից, բացառությամբ Ամանորյա տոներին նվիրված միջոցառումների կազմակերպման և քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերման համար իրականացված գնումներից, մյուս գնման ուղղություններով նկատվել է ծախսերի կրճատում:

ԵՔ գնումների արժեքային և քանակական վերլուծությունն ըստ գնման ընթացակարգերի ներկայացված է Աղյուսակ 20-ում:

**Աղյուսակ 20. ԵՔ գնումները ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

| | 2018թ. | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | **Կնքված պայմանագրերի քանակը** | **Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ. դրամ** | **Կնքված պայմանագրերի քանակը** | **Կնքված պայմանագր. արժեքը, մլրդ. դրամ** |
| Բաց մրցույթ | 313 | 8.7 | 146 | 1.9 |
| Հրատապ բաց մրցույթ | - | - | 9 | 1.4 |
| Էլ. աճուրդ | 9 | 0.02 | - | - |
| Գնանշման հարցում | 393 | 0.9 | 509 | 1.2 |
| **Մեկ անձ** | **174** | **0.5** | **18** | **0.2** |
| **Հրատապ մեկ անձ** | **10** | **0.4** | **9** | **0.02** |
| Ընդհանուր | **899** | **10.5** | **691** | **4.7** |

Վերոնշյալ աղյուսակում բերված տվյալներից նկատվում է բավական դրական միտում, քանի որ նախորդ ժամանակահատվածի համեմատ 2019թ. **ոչ**

**մրցակցային գնումները և՛ քանակապես, և՛ արժեքային առումով նվազել են:** Մասնավորապես, եթե 2018թ. ոչ մրցակցային եղանակով կնքվել էր 184 պայմանագիր գեներացնելով շուրջ 0.9 մլրդ դրամի պարտավորություն, ապա 2019թ. կնքվել է ընդամենը 27 պայմանագիր՝ գեներացնելով շուրջ 0.22 մլրդ դրամի պարտավորություն:

ԵՔ կնքած պայմանագրերի քանակային և արժեքային կառուցվածքն ըստ գնման ընթացակարգերի ներկայացված է Գծապատկեր 20-ում և 21-ում:

**Գծապատկեր 20. ԵՔ կնքած պայմանագրերի քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

**Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ.**




**Քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ.**




**Գծապատկեր 21. ԵՔ կնքած պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018 և 2019 թթ.**

**Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ.**




**Արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2019թ.**



Ինչպես երևում է գծապատկերներում բերված տվյալներից, 2019թ. **քանակական առումով ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ԵՔ գնումներում բավական փոքրացել է, սակայն արժեքային առումով այն փոքր ինչ մեծացել է:** Մասնավորապես, 2019թ. ոչ մրցակցային գնումների մասնաբաժինն ընդհանուր ԵՔ գնումներում քանակային առումով փոքրացել է շուրջ 16%-ով՝ կազմելով մոտ 4% նախորդ 20%-ի համեմատ, իսկ արժեքային առումով՝ ավելացել է 1%-ով՝ կազմելով 5% նախկին 4%-ի համեմատ:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ 2019թ. արժեքային առումով գնումների 70%-ը իրականացվել է բաց մրցույթի ընթացակարգի միջոցով (այդ թվում հրատապ):

ԵՔ ոչ մրցակցային գնումների վերլուծությունը եռամսյակային կտրվածքով ներկայացված է Գծապատկեր 22-ում:

**Գծապատկեր 22. ԵՔ ոչ մրցակցային գնումները եռամսյակային կտրվածքով (մլն դրամ), 2018 և 2019թթ.**




Համաձայն գնումների հաշվետվողականության կայքի տվյալների, 2019թ. ԵՔ գնումներում հաղթող են ճանաչվել 265 ընկերություններ, ինչը զիջում է նախորդ տարվա ցուցանիշը (340 ընկերություն):

Հարկ է նշել, որ դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ ԵՔ գնումներում առկա է մատակարարների որոշակի կենտրոնացվածություն, և այս առումով 2019թ. գրանցվել բացասական միտում, քանի որ եթե 2018թ. խոշորագույն 10 մատակարարները գումարային առումով վերահսկել են ԵՔ գնումների 42%-ը, ապա 2019թ. այս ցուցանիշը մեծացել է 10%-ով՝ դառնալով 52%: (Աղյուսակ 21):

**Աղյուսակ 21. ԵՔ խոշորագույն մատակարարները, 2018 և 2019թթ.**

| 2018թ. | | | 2019թ. | |
|---|---|---|---|---|
| | | **Կնքված պայմանագրերի արժեքը, մլն դրամ** | | **Կնքված պայմանագրերի արժեքը, մլն դրամ** |
| **1** | Խաչիար ՍՊԸ | 798 | Արիովշին ՍՊԸ | 612 |
| **2** | Լիլիթ-87 ՍՊԸ | 593 | Ջրային Կառույցներ ՓԲԸ | 604 |
| **3** | Արիովշին ՍՊԸ | 545 | Մուլտի Մոթորս ՍՊԸ | 274 |
| **4** | Նարիմանյան ՍՊԸ | 476 | Բիդեք ՍՊԸ | 169 |
| **5** | Կանազ Արմենիա ՓԲԸ | 414 | Ռաֆէլգրիգ | 159 |
| **6** | Սաիակյանշին ՓԲԸ | 399 | Ար-Բե Հայ-Բելառուսական Առևտրի Տուն | 154 |
| **7** | ԷյԴիՎի Մեդիա ԷՍ ՍՊԸ | 317 | Ֆակտորի Փրոդաքշն ՍՊԸ | 153 |
| **8** | Կենտրոն-Կանաչապատում ՓԲԸ | 300 | Արաբկիր կամար ՓԲԸ | 127 |
| **9** | Կապավոր ՍՊԸ | 296 | Ավան-Կանաչապատում ՓԲԸ | 111 |
| 10 | Էլդոգար ՍՊԸ | 291 | Էլդոգար ՍՊԸ | 107 |
| | **Ընդամենը 10 խոշոր մատակարարներ** | **4429** | | **2 470** |
| | ԵՔ ընդհանուր գնումներ, մլն դրամ | **10 534** | | **4 710** |
| | **10 խոշոր մատակարարների մասնաբաժինը ԵՔ ընդհ. գնումներում, %** | **42%** | | **52%** |

Առավել հետաքրքրական է ԵՔ խոշորագույն մատակարարների պայմանագրային պորտֆելների ուսումնասիրությունը (Աղյուսակ 22 և 23):

**Աղյուսակ 22. ԵՔ խոշորագույն մատակարարների բնութագիրը, 2018թ.**

| | | ԵՔ հետ կնքված պայմանագր արժեքը, մլն դրամ | ԵՔ հետ կնքված պայմանագրերի քանակը, հատ | Կնքված պայմանագր. արժեքը, մլն դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ | Մատակարարի ընդհ. պորտֆելում ԵՔ գնումների կշիռը, % |
|---|---|---|---|---|---|---|
| **1** | Խաչիար ՍՊԸ | 798 | 1 | 798 | 1 | 100 |
| **2** | Լիլիթ-87 ՍՊԸ | 593 | 1 | 822 | 2 | 72 |
| **3** | Արիովշին ՍՊԸ | 545 | 3 | 1224 | 7 | 45 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | Նարիմանյան ՍՊԸ | 476 | 2 | 476 | 2 | 100 |
| 5 | Կանազ Արմենիա ՓԲԸ | 414 | 2 | 613 | 10 | 68 |
| 6 | Սահակյանշին ՓԲԸ | 399 | 1 | 399 | 1 | 100 |
| 7 | ԷյԴիՎի Մեդիա ԷՍ ՍՊԸ | 317 | 2 | 317 | 2 | 100 |
| 8 | Կենտրոն-Կանաչապատում ՓԲԸ | 300 | 1 | 300.1 | 2 | 99 |
| 9 | Կապավոր ՍՊԸ | 296 | 1 | 2729 | 7 | 11 |
| 10 | Էլդոգար ՍՊԸ | 291 | 1 | 291 | 1 | 100 |

**Աղյուսակ 16. ԵՔ խոշորագույն մատակարարների բնութագիրը, 2019թ.**

| | | ԵՔ հետ կնքված պայմանագր արժեքը, մլն դրամ | ԵՔ հետ կնքված պայմանագր երի քանակը, հատ | Կնքված պայմանագր. արժեքը, մլն դրամ | Հաղթած մրցույթների թիվը, հատ | Մատակարարի ընդհ. պորտֆելում ԵՔ գնումների կշիռը, % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արիովշին ՍՊԸ | 612 | 8 | 712 | 14 | 86 |
| 2 | Ջրային Կառույցներ ՓԲԸ | 604 | 2 | 604 | 2 | 100 |
| 3 | Մուլտի Մոթորս ՍՊԸ | 274 | 1 | 280 | 2 | 98 |
| 4 | Բիդեք ՍՊԸ | 169 | 2 | 263 | 5 | 64 |
| 5 | Ռաֆէլգրիգ | 159 | 1 | 252 | 2 | 63 |
| 6 | Ար-Բե Հայ-Բելառուսական Առևտրի Տուն | 154 | 1 | 154 | 1 | 100 |
| 7 | Ֆակտորի Փրոդաքշն ՍՊԸ | 153 | 2 | 186 | 5 | 82 |
| 8 | Արաբկիր կամար ՓԲԸ | 127 | 1 | 127 | 1 | 100 |
